

375

Հ-11

# ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ Ծ Ր Ա Գ Ր Ե Ր Ը

II ԳՐԱԿ

1. ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2. ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
3. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ



315:3

2-11

4 APR 2013

4 - MAR 2010

ՀԱԽԶ ԼՈՒՍԺՈՂՆՈՄԱՏ — ՈՒՍՈՒՄՆԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

# ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ Ծ Ր Ա Գ Ր Ե Ր Ը

II ԳՐԱԿ

1. ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2. ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
3. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1008  
36647



Պետերբուրգի տպարան  
Դրամիւն 7084 (բ)  
Պատվեր 381  
Հրատ. 2037  
Տիրամ 3000



**Յ. ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ**

Յեղատեմբերի 5-ի ժողովման մեջ տարրական և միջնակարգ դպրոցների մասին, Համկոմկուսի կենտկոմը խնդիր է դնում ազելի ևս ուժեղացնել աճող սերունդի կոմունիստական դաստիարակութունը, նրան սոցիալիստական շինարարության և դասակարգային պայքարի ուղիով մասնակցության պատրաստելու համար:

Այս կազմակցությամբ կենտկոմն առաջարկում է կուսակցական կազմակերպություններին՝ ուժեղացնել դպրոցական գործի ղեկավարությունը և իրենց առկա հսկողության տակ վերցնելու հասարակական քաղաքական-դիսցիպլինների դասավանդման դրումը դպրոցներում:

Դպրոցական աշխատանքների ամբողջ բովանդակությունը պետք է լենինյան կոմունիստական դաստիարակության խնդիրներին, իսկ կոմունիստական դաստիարակության գործում անպայմանորեն հսկայական դեր է խաղում հասարակագիտությունը: Այս աչքի առաջ ունենալով, վերջինիս առաջ դրվում են հետևյալ խնդիրները.

1) Ծափալուն պայքար հակահեղափոխական բուրժուական և մանր բուրժուական իդիոլոգիաների դեմ, վերջինք դասակարգային պայքարի ներկա ետապում ներթափանցելով մեր շարքերը, կարողանում են դուռն իրենց ազդեցությանը յնթարկել աշխատավորության անգիտակից և անկայուն տարրերին.

2) Շուրջ առաջ սոցիալիստական հասարակության կառուցման ճանապարհին ու գործնական միջոցները և լենինյան գարձանից առաջ շինարարության ուղիով մասնակիցները:

Այս խնդիրների իրագործումը լայն հնարավորություն է կուսակցությանը Մարքս-Լենինյան աշխարհայացք մշակելու:



Իր գոյութեան ամբողջ ժամանակամիջոցում խորհրդային տարրական դպրոցը չի ունեցել հասարակագիտութեան խնդրաբույն ծրագիր, վերալիսի դրութեանը բոլորում եր ծրագրերի կուպլեքսային կառուցվածքից ըստ վորի հղարոցում ուսումնասիրվում է վոչ թե առանձին տուրկա—հասարակագիտութեան, ալ կոնկրետ և մշտապես փոփոխվող կենդանի իրականութեան:

Հասարակագիտութեան սիստեմատիկ կուրսի բացակայութեանը հասցրել է այն դրութեան, վոր սովորողները գիտելիքները կրում են անսիստեմ և մտկերեսային բնույթ: Այս հանգամանքը անհրաժեշտ պահանջ է դնում մեր առաջ տալ հասարակագիտութեան սիստեմատիկ կուրս, ծրագիր կառուցված գիտելիքական մատերիալիզմի վրով:

1-ին աստիճանի դպրոցի հասարակագիտութեան ծրագրերի կառուցվածքը և նրանցում դրված խնդիրները ցույց են ապրկա վոր տարեց-տարի լերելաների դարգացման գուղընթաց պետք է լայնանա յերելաների մտավոր հորիզոնը և աճի նրանց կողմից ձեռք բերվող գիտելիքների պաշարը, վորը հնարավորութեան կտա նրանց սիստեմատիկ և հիմնովին կերպով յուրացնելու ուսումնասիրվող խնդիրները, նակառակ անցյալի այն դրութեան, յերը յերելան մեքենայորեն հաճախ կրկնում եր սոցիալիզմ, կալվածատեր, կուլակ և այլ բառեր, առանց հասկանալու դրանց իմաստը:

Մյուս կողմից ներկա ծրագիրը դեն է պցում այն տեսակետը, թե՛ ռուսման առաջին տարիների ուսումնասիրվող խնդիրները սահմանները պետք է տարածականորեն սահմանափակ լինեն (1927 թ. տարրական դպրոցների ծրագրերը), Ընդհակառակը ներկա ծրագրերը ուսման հենց առաջին տարվանից յերելաները ծանոթանում են միջազգային հեղափոխական պայքարի խնդիրներին:

Առաջին խմբից արդեն հիմք է դրվում և հակակրօնական աշխարհայացքի կազմակերպման:

Պետք է ասել, վոր ծրագրում վորտը չափով իշխում և կոնցենտրիկ մոմենտը, վորից հնարավոր չի լիզել ամբողջովին խոստափել: Ի հարկե, ծրագրում կրկնվող խնդիրները դրվում են ալլ կապակցութեամբ և տարբեր ծավալով ու խորութեամբ համապատասխան տվյալ տարիքին և խմբին: Մնում է, վոր հասարակագիտութեան ուսուցիչը ծրագրում արված շրջանակներից դուրս չգա: Այս առնչութեամբ պետք է ասել, վոր ծրագրերում դրված են շատ դեպքերում այնպիսի խնդիրներ, վորոնք բարդ են, աս-

կայն տնրաժեշտ տվյալ խմբի համար: Այս դեպքում ուսուցիչը պետք է տարրական և պարզ ձևով յուսաբանի ալլ հարցերը. բայց վորինչ չեն արժենա թեկուզ հրաշալի կերպով դրված հասարակագիտութեան պարագմունքները, յեթե նրանք սերտ կերպով չկապվեն յերելաների՝ սոցիալիստական շինարարութեան մասնակցելու հետ, վորը հանդիսանում է ամենահզոր միջոցներից մեկը կոմունիստական դաստիարակութեան գործում:

Դպրոցի ամբողջ խնդիրը կայանում է նրանում, վոր յերելաներին աալով հասարակագիտութեանից սիստեմատիկ գիտութեան, նրանց չկարի սոցիալիստական շինարարութեանից:

Մեր հետ միասին տալով հասարակագիտութեանից սիստեմատիկ գիտութեան, բմլորովին չի նշանակում, վոր ալլ դիպրիպները ճշինական պարիսպով պետք է առանձնացած լինի մյուս դիպրիպներից և վոր դպրոցի ամբողջ ուսումնա-դաստիարակչական աշխատանքը պետք է կրի սխոլաստիկ բնույթ:

Մյուս կողմից ել չափաի մոռանալ, վոր ռուսացման կայն արտագրողական աշխատանքի հետ անհրաժեշտ է անցկացնել այնպիսի հիմքի վրա, վորպեսզի աշակերաների վողը հասարակական արտադրական աշխատանքը յնթարկված լինի դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին: (Համ Կ. Կ. (բ) Կենտկոմի սեպտեմբ. 5-ի վորոշումից):

Առանձնապես ուժեղ պիտի լինի կապը հասարակագիտութեան և պրիտիկական աշխատանքի միջև: Որինակ, յերը հասարակագիտութեանը, 4-րդ խմբում մշակում է հնգամյակը, պրիտիկական աշխատանքն ուսումնասիրում է արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան տարբեր ճյուղերի կազմակերպչական ու տիկնիկական պրոցեսը, մեքենաների կառուցվածքը, կոչիկալիվացման, սոցիալիստական և կազմակերպչական կողմը, դուրատնտեսութեան մեքենայացումը և այլն: Մյուս կողմից պրիտիկական աշխատանքի միջոցով սովորողները մասնակցում են այս բոլոր պրոցեսներին:

Մաթեմատիկայի հետ հասարակագիտութեան կապը պետք է արտահայտվի նրանում, վոր մաթեմատիկան պետք է հասարակագիտութեանից մատերիալներ ու թվական տվյալներ քաղի կենսական խնդիրների համար:

Նույնպես բնական կապ պետք է լինի նաև լիզվի և հասարակագիտութեան միջև, վորոնք միմյանց ոգնելով (յերը լիզվի շնորհիվ յուրացվում են հասարակագիտութեանը վերաբերվող



խնդիրները, կամ լեզվի դասի համար նյութեր վերցնվում են հասարակագիտությունից) կկարգանան ավելի հեշտացնել առարկաների յուրացումը:

Զգտելով ներքին կառավարչական առարկաների միջև, ղեկավար և կատեգորիկ կերպով հրաժարվել արհեստական կապերից և այնպիսի ձևական մոտեցումից, լերը աշխատում են մի կերպ կառավարող հաստատու ինչի հետ պատահի, և ինչպես պատահի, ինչպիսի տառապում ելին նախկին ծրագրերը:

Յերեխաներին անհրաժեշտ ծավալով գիտելիքներ առելու և այդ գիտելիքները պրակտիկայի հետ կապել սովորեցնելու համար, անհրաժեշտ և հասարակագիտությունից դասավանդման մեթոդները արմատական բարելավումը: Հասարակագիտությունից դասավանդումը պետք է տարվի այնպիսի մեթոդներով, վորոնք ոգնեն առաջ և արդյունավետ կերպով տիրապետելու ծրագրով սահմանված գիտելիքների դոմարին, զինքն սովորողներին տարրական հետազոտման ունակությունը, կարողանալ գիտել, լեզրակառուցություն հանել, հնարավորություն տան ստացած գիտելիքները գործադրելու մեր սոցիալիստական շինարարության պրակտիկայում և ոգնեն յերեխաների ինքնուրույնության զարգացմանը: Որտեղ կարևոր է, վորպեսզի հասարակագիտական պարապմունքները ապահովեն սովորողի հետաքրքրությունից դարձացումը հասարակական քաղաքական խնդիրների նկատմամբ: Հասարակագիտական պարապմունքների կարևոր մոմենտներից մեկը հանդիսանում է շրջապատող հասարակական քաղաքական յերեկությունների մասին յերեխաներին ճիշտ պատկերացում տալը և այդ յերեկությունների մասին նրանց ունեցած գիտելիքներն ընդհանուր սխտեմի վերածելը: Սրա համար անհրաժեշտ է կիրառել երկուստեմաներ, վորոնք հասարակագիտական աշխատանքների մեջ խիստ կարևոր դեր են խաղում:

Երկուստեմաները պետք է լեզրակառուցվեն այնպես, վորպեսզի նրանք զարգացնեն յերեխաների մեջ հետազոտման ունակություն և գիտողականություն:

Հասարակագիտական աշխատանքներում գիտողականությունը պետք է կիրառվի միաժամանակ նաև նկարների, մոդելների և աշխարհագրական քարտեզների և այլ իլլուստրացիոն միջոցների ոգտագործումով: Սակայն այս մեթոդը կիրառելով, պետք է խուսափել իրականությունը լեզր միջոցներով և առարկաներով փոխարինելուց: խոշոր նշանակություն ունի հասարակագիտական

աշխատանքներում լեզրերը, վորը լրացնում և ծրագրերի մատերցաները առարկա թարմ մատերցաներով, դպրոցը կապում է իրեն շրջապատող հասարակական կյանքի հետ, զարգացնում և ագիտացնում է պրոպագանդայի ունակությունը, ոգնում է սովորողներին մասնակցելու յերեկու աշխարհների՝ կապիտալիզմի և սոցիալիզմի միջի պայքարին, (ՄԱՊ, ՊԱՋ, ԱՎԻՌՄ, քաղաքական կամայնիաներ, տոնակատարություններ և այլն) և սոցիալիստական շինարարությունը (ինդուստրացիան որ, կոնկրետիզացման որ, խնայողական շարաթ, գարնանացանի, աշնանացանի կամպանիաներ և այլն: Բացի այս բոլորից, հասարակագիտական աշխատանքներում խոշոր դեր է խաղում մանկավարժի կենդանի խոսքը: Զրույցները և պատմվածքները պետք է նախորդ խնամքով և մտածված պատրաստվեն: Նրանք պետք է լինեն հետաքրքիր, զբաղիչ, յերեխաների մտավոր հորիզոնը լայնացնող և նրանց մեջ դեպի գիտությունը հետաքրքրություն շարժող:

Այս բոլոր թված մեթոդների կիրառումը պահանջում է ուսուցիչներից լուրջ և խնամքով պատրաստություն յուրաքանչյուր պարագմունքի համար: Նախքան սովորողներին մշակելու համար մատերիալ առաջարկելը, անհրաժեշտ է ալգաիսին ջոկել և հարմարեցնել սովորողների ուժերին և զարգացման մակարդակին: Պետք է նախորդ մտածել, թե ինչ հոր հակացողություններ են տրվելու յերեխաներին, նախորդ աչքի առաջ ունենալ տվյալ որվա համար առաջարկվող աշխատանքների միջոցները, և այլն:

Առաջարկվող ծրագրում մատերցաները բաժանված են պարապմունքներին հատկացվող ժամանակի մեջ և յուրաքանչյուր թեմայի համար նշված են ժամեր: Սա բավականին կհեշտացնի ուսուցչի դրությունը, կոգնի պարզ պատկերացնելու իրեն մատերցալի ծավալը, վորը պետք է մշակվի տվյալ ժամանակամիջոցում: Այս բաժանումը սակայն դոգմա չի և պարտադիր բոլորի համար ամեն պայմաններում, նայած խմբի պատրաստականությունը, այս կամ այն բաժնի յուրացման աստիճանից ժամերը կառող են ավելացվել կամ պակասեցվել:

Նախորդ ապրինների ծրագրերում կոմպլեքսային թեմաների ամբողջ հասարակագիտական բովանդակությունը կենտրոնացված էր հեղափոխական տոների շուրջը: Այս հանգամանքը ծրագրերի կոմպլեքսային կառուցվածքի հետ միասին հասարակագիտությունը վեր եր ածում սխտեմից ու ամբողջությունից դուրս գիտելիքների փշրանքներ: Առաջարկվող ծրագրում այդ դեֆեկտը վի-



բացված է: Տոները վաղ մի դեպքում չեն հանդիսանում առանցքը, վորոնց շուրջը համախմբվում են հասարակագիտության պարագ-մունքները:

Սակայն միանգամայն սխալ կլիներ, մեկնաբանել այդ վոր-պես հրաժարում հեղափոխական տոների անցկացումից-դպրոցում:

Կոմունիստական դատարարակության միջոցների սխառնում վորոնք գործադրվում են դպրոցներում, հեղափոխական տոները խաղում են խոշոր դեր:

Հեղափոխական տոնակատարութունները սերտ կերպով կապված են բանվորների կյանքի և պայքարի հետ: Ուսուցման յուրաքանչյուր քայլում ծրագրերում կան այնպիսի թեմաներ, վորոնք կապված են հեղափոխական տոների հետ: Ինչպես օրի-նակ՝ առաջին տարում, յերբ մշակվում են թեմաներ ֆարերկայի կամ կոլխոզի մասին, զբաղվում են կապել հոկտեմբերի տոնա-կատարության հետ, վորը կհեղափոխի յերեխաներին ավելի լավ ըմբռնելու ֆարերկայի և կոլխոզի հետ կապված խնդիրները:

Կամ չորրորդ տարում յերկու աշխարհների՝ (սոցիալիստա-կան և կապիտալիստական) պայքարին վերաբերվող թեման մշա-կելիս կարելի չե այդպիսին կապել մայիսի 1-ի, իսկ հնգամյակը՝ Հոկտեմբերյան հեղափոխության հետ: Հետևապես ուսուցման յու-րաքանչյուր տարում կան այնպիսի թեմաներ, վորոնք կապված են հեղափոխական տոների հետ:

Այն դեպքում, յերբ տոնը չի դուգադրվում մշակվող թեմա-ներին, նա վոչ մի դեպքում չպետք է խախտի հասարակագիտու-թյան վորոնք ճանաչան հաշտությանն ու խաղաղությանը: Հոկտեմբերյան հե-ղափոխության տոնակատարության ժամանակ յերեխաները մշա-կում են միայն մատերիալի միսիմունը, վորն անհրաժեշտ է հաս-կանալու նշված դեպքերը:

Իսկ մանրամասն ուսումնասիրությամբ յերեխաներն զբաղ-վում են այն ժամանակ, յերբ դա պահանջում է ծրագրերը: Հա-սարակագիտության մշակվող թեմային չզուգադրվող այս կամ այն հեղափոխական տոնին պետք է հասկացնել 1-2 ժամ հասա-րակագիտության պարագմունքների ժամանակի հաշվին: Տոների դեղարվեստական ձևավորումներն նախապատրաստությունը պետք է անցկացվի ակումբային աշխատանքների կարգով:

Գյուղի և քաղաքի դպրոցների համար առանձին վարիանտ-ներ չկան և յերկուսի համար էլ առաջարկվում է միևնույն ծրա-գիրը, քացի առաջին խմբի ծրագրից, վորի մի մասը արված է

քաղաքի և գյուղի վարիանտով: Այսպես կառարկած է, նկատի ունենալով, վոր ծրագրում գրված համարյա բոլոր խնդիրներն էլ հաշտասար չափով անհրաժեշտ են թե քաղաքի և թե գյուղի դպ-րացներին համար և քացի այդ, մեծ մասամբ այնպիսի հարցեր են, վորոնց չի կարելի բաժանել գյուղի և քաղաքի վարիանտներին: Կարելի. սա չի նշանակում, վոր բոլոր թեմաներն էլ նույնու-թյամբ պետք է անցկացնել ինչպես քաղաքում, նույնպես և գյու-ղում:

Ընդհանրապես, բոլոր թեմաներն էլ պետք է հարմարեցվեն տեղական պայմաններին և խորացվեն գյուղի կամ քաղաքի իրա-կանության համապատասխան: Ինչ վերաբերվում է գյուղատնտե-սության սոցիալիստական վերակառուցման, կամ սոցիալիստա-կան արդյունաբերության զարգացման խնդիրներին, առանց պետք է ավելի խորացվեն ու ընդարձակվեն, առաջինը գյուղա-կան դպրոցում, իսկ յերկրորդը՝ քաղաքի դպրոցում:

Ծրագրերը գիտամբ կազմված են շատ պարզ վոճով, և մեծ մասամբ թեղիաների ձևով, ի նկատի ունենալով յերեխաների հասակն ու մաղիոր մակարդակը, վորը ուսուցչին վորոնք բացա-արություն, ուղղություն և առիթ՝ յերեխաների համար խնդիր-ները պարզելու:

Յուրաքանչյուր խմբի ծրագրի համար հատուկ մեթոդական նամակներ կուղարկվին առանձին:

#### ԸՍՏ ԽՄԵՐՈՒ ՀԱՏՎԱԾՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ ՅԵՎ ԺԱՄՆԵՐԸ

Առաջին խմբում տրվում է նետվյալ քանակները

|                                                                                           |          |
|-------------------------------------------------------------------------------------------|----------|
| 1. Առաջին քայլերը դպրոցում . . . . .                                                      | (10 ժամ) |
| 2. Հեղափոխության հեղափոխությունը . . . . .                                                | (8 » )   |
| 3. Մեր կոմունիստությունը . . . . .                                                        | (40 » )  |
| 4. Հեղափոխական տոների և կոմպունյաների համար հասարակագի-տության ժամերին տրվում է . . . . . | (10 ժամ) |
| Ընդամենը 68 ժամ                                                                           |          |

Յերկրորդ խմբում տրվում է նետվյալ քանակները

|                                                                                                                                                     |          |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------|
| 1. Ինչպես էլիս ապրում առաջ բանվորներն ու գյուղացիները . . . . .                                                                                     | (15 ժամ) |
| 2. Հոկտեմբերյան հեղափոխությունը . . . . .                                                                                                           | (15 » )  |
| 3. Կարժի բանակը բանվորների և գյուղացիների պառտալանն է . . . . .                                                                                     | (10 » )  |
| 4. Ինչ ավեց հոկտեմբերյան հեղափոխությունը բանվորներին ու գյուղացիներին . . . . .                                                                     | (18 » )  |
| 5. Հոկտեմբերյան հեղափոխությունը փախց բանվորներին, զեղջ-կուհիներին և յերեխաների դրությունը . . . . .                                                 | (12 » )  |
| 6. Հոկտեմբերյան հեղափոխությունը միտքից բոլոր ազգություններին աշխատավորներին՝ ընդհանուր աջակցությանը և հանուն սո-ցիալիզմի պայքարելու համար . . . . . | (20 » )  |
| Ընդամենը 90 ժամ                                                                                                                                     |          |



Յոթերորդ խմբում տրվում է հետևյալ բնագծերը

1. Բանխորհրդի և գյուղացիների հեղափոխական պայքարը մինչև 1905 թվիվը . . . . . (18 ժամ)
2. 1905 թ. հեղափոխությունը . . . . . ( 8 » )
3. Հոկտեմբերյան հեղափոխությունը և խորհրդային իշխանություն հաստատումը . . . . . (18 » )
4. Կամուրիստական կուսակցությունը . . . . . ( 5 » )
5. Կոմյունիստական կուսակցության հաղթանակը . . . . . ( 8 » )
6. Խորհուրդներ . . . . . (12 » )
7. Սոցիալիստներ . . . . . ( 7 » )
8. Կո. սակցությունը և սոցիալիստական շինարարությունը . . . . . ( 8 » )
9. Հեղափոխական տոները և կամուրիստների համար հատարակազմություն ժամերից տրվում է . . . . . ( 6 » )

Ընդամենը 90 ժամ

Չորրորդ խմբում տրվում է հետևյալ բնագծերը

1. Սոց. շինարարության հնգամյա պլանը . . . . . (18 ժամ)
2. Մեր աղարդյունաբերությունը, ավազյունաբերությունը և տրանսպորտը ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերն են (40 ժամ)
3. Գյուղատնտեսության կոլեկտիվացումը . . . . . (22 » )
4. Կուլտուրական շինարարության հնգամյա պլանը . . . . . ( 8 » )
5. Հնգամյակի առանձին մասերի կատարումը կապված է մեկը մյուսի հետ . . . . . ( 7 » )
6. ԽՀՄՄ-ը մասն և սոցիալիզմի շրջանը . . . . . (8 » )
7. Յերկու աշխարհ՝ կապիտալիստական և սոցիալիստական . . . . . (7 » )
8. Կոմկուսակցությունը բանվոր դասակարգի ամենից առաջնորդ և ամենազեղակից մասն է . . . . . (15 » )
9. Հեղափոխական տոները և կամուրիստների համար հատարակազմություն ժամերից տրվում է . . . . . (10 » )

Ընդամենը 136 ժամ

ՀԱՍԱՐԸ ԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. ԽՈՒՄԲ

1. Առաջին ֆայլերը դպրոցում (10 ժամ) Դպրոցում սովորում են մեծ ու փոքր յերեսխաները: Դպրոցում սովորում են տարբեր ազգությունների աշխատավորների՝ բանվորների, կոլխոզնիկների, վոչկոլխոզնիկ գյուղացիների, ծառայողների և այլ յերեսխաները: Նրանք ընկերներ են իրենց աշխատանքներում և խաղի մեջ:

Ամբողջ դասարանում, դպրոցում կա վարձ կարգ ու կանոն

Հարկավոր է խնայել դպրոցը, դասարանը և դպրոցական իրերը: Պետք է սովորել ողավել շենքից, ուսումնական պիտույքներին և կահկարասիքին: Հարկավոր է կարգ պահպանել աշխատանքի և խաղի ժամանակ, չխանգարել ուրիշի աշխատանքը և միասին աշխատել: Պետք է կանոնավոր հաճախել դպրոց և պարտավորվածներ բաց չթողնել: Ցեկեզեցական տոներին բոլորը պետք է հաճախեն դպրոց: Ստուգել՝ արդյոք դպրոցական տարիքի բոլոր յերեսխաները հաճախում են դպրոց, իմանալ ինչու բոլորը չեն հաճախում: Ոժանդակել, վոր բոլորը հաճախեն: Իմանալ թե համապատասխան մարմիններն ոգնում են չբավարհների յերեսխաներին, վորպեսզի նրանք կանոնավոր հաճախեն դպրոց և սպանան ձրի նախաճաշ, դասական պիտույքներ և այլն:

II. Հոկտեմբերիկներ (8 ժամ).—Մեր և դպրոցի մյուս խմբերում կան հոկտեմբերիկներ: Հոկտեմբերիկները մանկական հոկտեմբերիկը կազմակերպություն առկա են: Ինչով են պարագում հոկտեմբերիկները իրենց խմբերում:

Հոկտեմբերիկները—բոլոր աշխատավորների յերեսխաների ընկերներն են: Հոկտեմբերիկները պետք է որինակ ծառայեն իրենց բոլոր ընկերներին համար, աշխատանքի և սովորելու մեջ: Հոկտեմբերիկները կազմակերպված և միացած են փնջիկներում:

Փձիկները միասնաբեն հոկտեմբերիկների խմբերում: Հոկտեմբերիկների խմբակավարներին տալիս է կոմսոմոլը, իսկ փնջիկավարներին՝ պիոներ կազմակերպությունը: Դպրոցական և հոկտեմբերիկների խմբերում յերեսխաները ապրում և աշխատում են կոլեկտիվ կերպով, միասին, ընկերաբար, ոգնելով մեկը մյուսին:

III ա. Մեր կոլեցեստությունը (գյուղի դպրոցների համար \*).—Ինչ է մշակում (արտադրում) մեր կոլխոզը: Մեր կոլխոզը կազմակերպված է նախկին անհատական տնտեսություններից: Կոլխոզում հողը, մեքենաները, գործիքները, անասունները, շինությունները (գոմ, մարագ և այլն) ընդհանուր են: Բոլոր աշխատանքները կատարվում են կազմակերպված և կոլեկտիվ: Աշխատանքն առաջ և լավ կատարելու համար կազմակերպվում են հարվածային բրիգադաներ:

Կոլեկտիվ աշխատանքը կոլխոզներում գյուղացիներին ավելի ոգնուտ է տալիս, քան աշխատանքը անհատական տնտեսություններում: (Իներ կոնկրետ որինակներ): Կոլխոզներում շատ

\* ) Մեծաղ թեմային հատկացվում է 40 ժամ:



աշխատանքը կատարվում է մեքենաների միջոցով: Մեքենաները հեշտացնում են մարդու աշխատանքը: Մեքենաների աշխատանքը ավելի ձեռնտու չէ և արդյունավետ: (Որինակ՝ արակտորի և յեզան աշխատանքի համեմատությունը):

Կոլխոզնիկները ժամանակին հոգում են կոլխոզների տնտեսությունները բարելավելու մասին, վարպետի բարձրացնեն կոլխոզի բնիկը: (Ինչ միջոցներով՝ բերել արինակներ՝ սերմի զտում, աշխատանքի լավ կազմակերպում և այլն): Կոլխոզներում բերքը բաժանվում է հետևյալ կերպ. լավ շատ և լավ է աշխատում, նա շատ է ստանում, ով չի աշխատում, նա վոչինչ չի ստանում: (Բերել որինակներ մեր կոլխոզից):

Կոլխոզները հոգում են յերեխաների և ծերերի մասին: Նրանք հոգում են նաև իրենց անդամներին սովորելու, ընդհանուր ճաշարաններ, մսուրներ, մանկապարտեզներ բանալու և այլ խնդիրների մասին: Կուլակներին և տերտերներին կոլխոզում չեն ընդունում: Նրանք կոլխոզի թշնամիներն են: Նրանք աշխատում են խտրաբերել կոլխոզի աշխատանքները: Նրանք կոլխոզին դեմ են: Կուլակները առաջ շատ մեքենաներ ու հողեր ունեցին: Հիմա շատ տեղերում կուլակների հողերը և մեքենաները խորհրդային իշխանությունները խլել և ավել է կոլխոզներին: (Յեթե ավել շրջանում այդ կատարված է, ցույց տալ արինակներով): Կուլակներն ու տերտերները վնասում և խանգարում են կոլխոզի աշխատանքներին (կոնկրետ որինակներ՝ մեքենաներ, արտեր փչացնելու, խոտ տալու մասին և այլն):

Առանց բանվորների ոգնություն, առանց գործարանների ու ֆաբրիկաների չեն կարող կոլխոզները գոյություն ունենալ և զարգանալ: Գործարանների բանվորները ոգնում են կոլխոզներին աշխատանքները լավ կազմակերպելու: Նրանք ոգնում են կոլխոզներին, կուլակների դեմ պայքարելու: Գործարաններում պատրաստում են գյուղի համար մեքենաներ և զանազան ապրանքներ: Բայց գործարանները միայն այդ չեն պատրաստում, նրանք արտադրում են և այլ բաղադրիչ մեքենաներ, գործիքներ ու ապրանք: Գործարաններում և ֆաբրիկաներում աշխատանքները կատարում են կոլեկտիվ կերպով և մեքենաների միջոցով: Ամեն մի բանվոր պետք է լավ գրագետ լինի, վոր կարողանա կատարել իրեն հանձնարարված աշխատանքը (մեքենաները քանդել, փոխելու համար, նորից հավաքել և այլն):

III. Բ. Մեր գործարանը (ֆաբրիկա) գյուղացիների համար. — Ինչ և մշա-

կում մեր գործարանը, ֆաբրիկան, ինչպիսիք հում նյութերից: Գործարաններում և ֆաբրիկաներում աշխատանքը կատարվում է մեքենաների ոգնությամբ: մեքենան հեշտացնում է մարդու աշխատանքը: Մեքենայի աշխատանքն ավելի ձեռնտու չէ և արդյունավետ (բերել որինակներ ձեռքով, և մեքենայով կարած շորը, կոշիկը, վերարկուն և այլն), քան ձեռքի աշխատանքը: Գործարանում աշխատանքները կատարվում են կոլեկտիվ կերպով: Մեկի աշխատանքը կապված է մյուսի աշխատանքի հետ: (Կատարել եքսկուրսիա դեպի գործարան այս բոլորը ցույց տալու համար):

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը բոլոր գործարաններն ու ֆաբրիկաները, մեքենաները, յերեխաները և հանքերը պատկանում էին կապիտալիստներին-բուրժուաներին:

Բանվորները վոչ մի իրավունք չուներին խառնվելու կապիտալիստին պատկանող գործարանների ու ֆաբրիկաների գործերին:

Առաջ բանվորները վարձվում էին հարուստների մոտ և աշխատում էին նրանց ոգտին: Կապիտալիստները ստիպում էին բանվորներին աշխատել շատ և վարձատրում էին քիչ (ինչպես հիմա արդասահմանում է): Իրենք կապիտալիստները չէին աշխատում, բայց ստանում էին մեծ ոգուտներ բանվորների աշխատանքից (նրանց շահագործում էին): Բանվորները Հ կոտմբերյան հեղափոխությունից միջոցով վոչինչ էին կապիտալիստներին (ինչպես և կալվածատերերին) և խեցին նրանցից գործարաններն ու ֆաբրիկաները: Հիմա գործարանները և ֆաբրիկաները պատկանում են բանվորներին:

Բանվորները կառուցում են բաղաժամի նոր գործարաններ ու ֆաբրիկաներ և վերանորոգում են հները: Իրենց աշխատանքները արագ ու լավ կատարելու համար լավագույն բանվորները կազմակերպում են հարվածային բրիգադներ:

Գյուղում գյուղացիները կազմակերպված են կոլխոզների մեջ: Կոլխոզների հողը, մեքենաները, գործիքները և կենդանիները ընդհանուր են: Բոլոր աշխատանքներն կատարվում են կոլեկտիվ կերպով: Կոլեկտիվ աշխատանքը կոլխոզնիկին տալիս է ավելի շատ արդյունք, քան մենատնտեսի աշխատանքը (բերել կոնկրետ որինակներ):

Կոլխոզնիկներն աշխատում են բարելավել կոլխոզի տնտեսությունները վարպետի լավ բերք ստացվի և շատ մթերքներ լինեն: Կոլխոզը հոգ է տանում իր անդամների լուսավորության մասին:



(բաց և անուամբ դպրոցներ, վերացնում և անդրադասարաններ, և այլն): Բաց և անուամբ հասարակական ճաշարաններ, մսուրներ, մանկապարտեզներ և այլն:

Բանվորները ոգնում են գյուղացիներին՝ կաղամակներ պելու իրենց աշխատանքը և ամբողջ կյանքը նոր և կոլեկտիվ ձևով: Նրանք աջակցում են կոլեկտիվների զարգացման ու ամրացմանը, պատրաստում են գյուղի համար մեքենաներ, և զանազան ապրանքներ, ուղարկում են կոլեկտիվների համար լավագույն բանվորներից աշխատողներ և այլն: Կոլեկտիվներն էլ իրենց կողմից արտադրում են բանվորների համար մթերքներ և գործարանների համար հում նյութ:

Կուլակներին և տերտերներին չեն ընդունում կոլեկտիվներում: Նրանք աշխատավորների և կոլեկտիվների թշնամիներն են և պայքարում են կոլեկտիվների դեմ: Կուլակները առաջ ունենին շատ հողեր, տարբեր էյին ի հաշիվ բաարակների և չքավոր գյուղացիների շահագործման: Բանվորներն ոգնում են կոլեկտիվներին՝ պայքարելու կուլակների և տերտերների դեմ:

Գործարանների ու ֆաբրիկաների (քաղաքի) և կոլեկտիվների (գյուղի) աշխատանքների միջև գոյություն ունի սերտ կապ: Յերբ դպրոցականները կմեծանան, նրանք նույնպես կաշխատեն գործարաններում և կոլեկտիվներում:

Հոկտեմբերիկներն ու աշակերտները հիմա յեւ իրենց ուժերի չափ ոգնում են կոլեկտիվներին:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ

1. Քաղաքի յեւ գյուղի դպրոցների համար (III թեմայի շարք).—Առաջ իշխանությունը գտնվում էր թագավորի, կապիտալիստների (բուրժուաների) և կալվածատերերի ձեռքում: Գործարանները, ֆաբրիկաները և հողը նրանց սեփականությունն էր: Նրանք վարձում էին բանվորներին, ստիպում էին աշխատել շատ, վարձատրում էին քիչ: Իրենք կապիտալիստները և կալվածատերերը չաշխատելով, ստանում էին շատ ոգուտներ (յեկամուտներ):

Բաարակները վոչ մի սեփականություն չունեին, իսկ աղքատ գյուղացիները շատ քիչ հողեր ունեին, և զուրկ էին գյուղատնտեսական մեքենաներից ու անասուններից: Նրանք ստիպում էին վարձվել աշխատելու կալվածատերերի և կուլակների մոտ: Կալվածատերերը և կուլակները օտիպում էին բաարակներին շատ աշխատել, իսկ իրենք բոլորովին չէին աշխատում: Թագավորը և նրա ոգնակները (չինաշխատողները և վոստիկանները) ամեն կերպ աշխատում էին ստատակել կապիտալիստներին և կալ-

վածատերերի լավ կյանքը և բանվորներին ու գյուղացիներին չահագործումը: Թագավորը ինքը ամենամեծ կալվածատերն էր և ուներ բացի կալվածքներից նաև գործարաններ և ֆաբրիկաներ:

Կալվածատերերին և բուրժուաներին ձեռնառու չէր, վոր գյուղացիներն ու բանվորները միտն անգործեաւ. տերտերները խաբում էին, աղիտություն մեջ էին պահում բանվորներին ու գյուղացիներին, նրանք յեկեղեցու ու կրօնի միջոցով քարոզում էին բանվորներին ու գյուղացիներին հնազանդվելու հարուստներին: Տերտերներն ասում էին, վոր աղաքիսի որեւոր ասածու կողմից և հաստատված, վոր հարկավոր է յենթարկվել: Խոստանում էին աշխատավորության համար լավ կյանք՝ մեռնելուց հետո, իսկ իրենք ստանում էին շատ յեկամուտներ և կուշտ ու լավ ապրում էին:

Հոկտեմբերյան հեղափոխություն ժամանակ, 14 տարի սրանից առաջ, բանվորները և գյուղացիները տապալեցին կալվածատերերի-բուրժուաների իշխանությունը: Բանվորներն ու գյուղացիները խլեցին նրանցից հողերը, գործարաններն ու ֆաբրիկաները և իրենք սկսեցին կառավարել յերկիրը՝ խորհուրդների միջոցով: Մեզ մոտ Հայաստանում բանվորներն ու գյուղացիները հարուստների իշխանությունը զցցեցին և նրանց ձեռքից գործարանները, ֆաբրիկաները և հողը խլեցին ավելի ուշ, 3 տարի հետո, ալսինքն՝ 1920 թ. նոյեմբերի 29-ին և իրենք սկսեցին կառավարել յերկիրը:

Ուրիշ յերկրներում մինչև հիմա յեւ իշխանությունը Հարուստների, բուրժուաների ձեռքին է. նրանք տիրում են հողերին, մեքենաներին, գործարաններին և ֆաբրիկաներին: Զեղում են բանվորներին և գյուղացիներին, ստիպում են աշխատել իրենց՝ հարուստների համար: Բանվորները վաղուց պայքարում են, վոր աղապեն բուրժուաների ճնշումներից և իրենց մոտ ես հաստատեն խորհուրդների իշխանությունը:

Մեր բանվորներն ամեն կերպ ոգնում են աղ յերկրների բանվորներին, վոր նրանք շուտ աղապեն ճնշումներից և իրենց մոտ ես հաստատեն խորհրդային իշխանությունը: Ինչպես են հոկտեմբերիկներն ու դպրոցականներն ոգնում ուրիշ յերկրների բանվորներին, աղապելու բուրժուաների ճնշումից, պատանի ՄՈԳՐ-ականների կաղամակերպության դերը: (Կաղամակերպել դպրոցում պատանի ՄՈԳՐ-ականների լավագի, յեթի աղապեն չկա):



## Բ. ԽՈՒՄԲ

### ԻՆՉՊԵՍ ԵՑԻՆ ԱՊՐՈԻՄ ԱՌԱՋ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ԸՆԴ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ (15 ժամ)

Մինչև հսկանմանության հեղափոխությունը իշխանությունը գտնվում է կապիտալիստների ու կալվածատերերի ձեռքին: Նրանց հյին պատկանում գործարանները, հանքերը, յերկաթուղիները, հողը: Բանվորները սեփականությունից զուրկ են, իսկ գյուղացիները շատ քիչ հողեր ունենում: Ամբողջ լերկերը կառավարում էր թագավորը (ցարը) իր չիռովներին հետ: Յարակա՛ն իշխանությունը դա կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունն էր: Գյուղացիներն աշխատում էին կալվածատերերի և կուլակների համար, իսկ բանվորները կապիտալիստների համար: Կալվածատերն ու կուլակները նրանց պահում էին ստրկական վիճակի մեջ: Ցարական չիռովները հաճախում էին գյուղացիներից նրանց ուժերից վեր ահագին քանակությամբ ամեն տեսակի հարկեր և գործադրում էին ապրանքի կտմա՛յականություններ ու այլ ճնշումներ գյուղացիների նկատմամբ:

Ցարական իշխանությունը, կապիտալիստներն ու կալվածատերերը ճնշում էին բանվորներին և գյուղացիներին, իսկ փոքր ազգությունների բանվորներին ու գյուղացիներին բացի զրանից ճնշում էին նաև տվյալ ազգության կապիտալիստներն ու կալվածատերերը: Հոգեվորականները զբաժնում ունեւում էին հարուստներին: Բանվորներն աշխատում էին գործարաններում և ֆաբրիկաներում կապիտալիստների համար, նրանց բանվորական որը շատ լերկար էր, իսկ աշխատավարձ ցածր: Հատկապես ծանր էր կանանց և լերիսանների աշխատանքը: Բանվորները զուրա էին գալիս կապիտալիստների դեմ, կաղմակերպում էին գործադուլներ, առաջադրում էին իրենց պահանջները: Գյուղացիները պայքարում էին կալվածատերերի դեմ, (խլում էին կալվածատերերի հողերը, գոլթերը և հրդեհում էին կալվածքները և այլն):

1905 թվին կատարվեց առաջին հեղափոխությունը: Կապիտալիստները դաժան կերպով վարվեցին պայքարի դուրս լեկած բանվորների հետ: Լենինի կողմից կաղմակերպված բաղնվիկները կուսակցությունը ղեկավարում էր բանվորներին և գյուղացիներին՝ ցարի կապիտալիստների և կալվածատերերի դեմ մղած նրանց պայքարում:

Բաղնվիկների կուսակցության մեջ էին գտնվում լավագույն զիտակից և կայուն բանվորները:

Այդ պայքարում ընկան բաղնվիկ լավագույն հեղափոխականներ: Նրանք տանում էին դժվարին աշխատանք բանվորների մրացման և կաղմակերպման համար: Հաղափել և աշխատել շատ դժվար էր, նրանք ալդ անում էին խիստ դաղտնի: Ցարական պրիցիան նրանց հետ վարվում էր շատ խիստ և դաղանաբար: Նրանց զցում էին բանտերը, աքսորում էին, սպանում և այլն:

Այս կերպ բաղնվիկ հեղափոխականները յենթադկվեցին մահապատժի կամ մեռան բանտերում ու քսորում:

Ցարական իշխանությունը հալածում էր հատկապես այնպիսի ղեկավար բաղնվիկների, վորպիսիք էին՝ Լենինը, Ստալինը, Փրուդեն Զերժինսկին, Կալնինը—Վորոշիլովը, Շահումյանը և այլն: Նրանց նստեցնում էին բանտերում, աքսորում էին հեռու Միբիրի խորքերը, հալածում: Նրանք ստիպված էին թափվել ցարական ժա՛նգարմերիացի: Սակայն նրանք շարունակում էին պայքարը բանվոր դասակարգի ազատագրության համար:

Շնորհիվ բանվոր դասակարգի և կուսակցության կաղմակերպվածության, և ամբակուռ լինելուն՝ բաղնվիկների կուսակցությունը 1917 թ. հաղթանակ տարավ ցարի, կապիտալիստների և կալվածատերերի վրա:

### II. ՀՈԿՏԵՄԲԵՑԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ (15 ժամ)

1914 թ. կապիտալիստները պատերազմ սարքեցին, վորպեսզի ուրիշ ժողովուրդներից խլեն իրենց լերկները, շուկաները և ստանան մեծ շահույթ: Բանվորները և գյուղացիները դեմ էին պատերազմին: Բայց քանի վոր իշխանությունը գտնվում էր բուրժուաների ձեռքին, ուստի նրանք բանվորներին ու գյուղացիներին ուժով քշում էին դեպի պատերազմ, կապիտալիստների ու կալվածատերերի շահերի համար իրար սպանելու Բոլոր լերկների բանվորներն ու աշխատավորները շահերն ընդհանուր են, նրանց թշնամիները բոլոր լերկները կալվածատերերն ու կապիտալիստներն են: Պատերազմի ճակատում բաղնվիկ մարդիկ սպանվեցին: Բոլոր լերկները բանվորներին և գյուղացիներին պատերազմը հասցրեց աղքատության, քայքայման: Կապիտալիստները, ֆաբրիկաների և գործարանների սեփականատերերը, կալվածատերերն ու կուլակները ավելի հարստացան պատերազմի շնորհիվ: Հոգե-



վորականներն ոգնում ելին կապիտալիստներին, բանվորներին և գյուղացիներին, պատերազմի դաշտ քշելու: Պատերազմն սկսելուց 3 տարի հետո՝ 1917 թ. յերբ մեր յերկիրը հասել եր ծայր աստիճանի քայքայման և բանվորների ու գյուղացիների դրուժյունը դարձել եր անտանելի, նրանք բալլեվիկների ղեկավարութանը ապստամբեցին և հեղափոխութանը միացած զինվորների ուժնու-թյամբ տապալեցին սկզբում ցարին, հետո նաև կապիտալիստնե-րին ու կալվածատերերին: 1917 թ. հոկտեմբերին բանվորները բալլեվիկների կ'սակցութեան ղեկավարութամբ հաստատեցին իրենց իշխանութիւնը: (Տալ պատկերներ հոկտեմբերյան ուրբի պայ, արից, որինակ՝ Ձմեռային պալատի դրավումը Լենինգրա-դում, Կրեմլի դրավումը Մոսկվայում և այլն):

Խորհրդային իշխանութիւնը դադարեցրեց պատերազմը և հաշտութիւն առաջարցեց բոլոր ժողովուրդներին: Խորհրդային իշխանութիւնը կալվածատերերից խլեց հողը, իսկ կապիտա-լիստներին՝ ֆաբրիկաները, գործարանները, հանքերը և յերկա-թուղիները: Այս բոլորի տերը հանդիսացան բանվորներն ու գյուղացիները, վորոնք կառավարում են յերկիրը իրենց խորհրդ-ների միջոցով: Հոկտեմբերյան հեղափոխութիւնը բանվորներին և գյուղացիներին ազատագրեց կապիտալիստների ու կալվածատե-րերի ճնշումից, նա ազատագրեց ճնշված ժողովուրդներին, ուկրա-նացիներին, թաթարներին, վրացիներին, հրեաներին, հայերին, և ու-րիշների բոլոր աշխատավորներին: Մեր յերկրում ապրող բոլոր ազգերը ստացան հավասար իրավունքներ:

Հոկտեմբերյան հեղափոխութեան և խորհուրդների ղեկավարը Վլադիմիր Իլիչ Լենինն եր՝ բալլեվիկների կուսակցութեան ա-ռաջնորդը: Այսպես մեզ մոտ առաջացավ առաջին բանվորական պետութիւնը: Կոմունիստական կուսակցութիւններ կան նաև մյուս յերկրներում, վորտեղ իշխանութիւնը դեռ գտնվում ե հա-րուստների ձեռքին: Նրանց հալածում և կապիտալիստների իշ-խանութիւնը, բայց նրանք համառ պայքար են մղում բանվոր-ների և գյուղացիների ազատագրման և խորհրդային իշխանու-թիւն հաստատելու համար:

Հոկտեմբերյան հեղափոխութեանից հետո, դեռ մինչև 1920 թվի նոյեմբերը, Հայաստանում իշխանութիւնը գտնվում եր հայ կապիտալիստների ու կալվածատերերի ձեռքում (դաշնակցական-ների կառավարութեան): Հայաստանի բանվորներն ու գյուղա-ցիները սոսկալի ճնշվում և շահագործվում եին հայկական բուր-

ժուաների և նրանց կուսակցութեան, դաշնակցականների կողմից, վորոնք բացի դրանից կոտորում և թալանում ելին Հայաստանի թուրք և ալլ ազգի աշխատավորներին: Նրանք պատերազմում ելին հարևան յերկրների (Վրաստան, Ադրբեջան, Թյուրքիա) հետ, հայ կապիտալիստների և կալվածատերերի շահերի համար: Դաշ-նակցականների կառավարութեան ժամանակ Հայաստանը հասել եր ծայր աստիճան քայքայված դրութեան: Այս անտանելի դրու-թիւնն ու ճշռմները տանել չկարողանալով Հայաստանի բանվոր-ներն ու գյուղացիները կոմ. կուսակցութեան ղեկավարութամբ ապստամբեցին և Ռուսաստանի բա-վորների ու գյուղացիների որինակով, վաճեցին կապիտալիստներին ու կալվածատերերին և իշխանութիւնը վերցրին իրենց ձեռքը: Հայաստանի խորհր-դային իշխանութիւնը անմիջապես դադարեցրեց պատերազմը հարևան ժողովուրդների հետ, խլեց հողն ու գործարանները կա-պիտալիստներից, ու կալվածատերերից, հարասար իրավունք տվեց Հայաստանում ապրող ուրիշ ազգութիւնների աշխատա-վոր-ներին և Խորհրդային Ռուսաստանի ու հարևան Խորհրդային հան-րապետութիւններին ոգնութեամբ վերականգնեց քայքայված եր-կիրը:

### III. ԿԱՐԾԻՐ ԲԱՆԱԿԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՊԱՆՏՊԱՆՆ Ե (10 Ժամ)

Վերցնելով իշխանութիւնը, խորհրդային միութեան բան-վորութիւնը ու գյուղացիութիւնը ձեռնարկեցին պատերազմից քայքայված յերկրի վերականգնմանը: Բայց կապիտալիստներն ու կալվածատերերը դիմումի ելին բոլոր միջոցներին, վորպեսզի տա-պալեյին բա-վորներին և գյուղացիներին իշխանութիւնը ու վերա-կանգնեյին իրենց տիրապետութիւնը: Նրանք սկսեցին դավա-դրութիւններ կազմակերպել Խորհրդային իշխանութեան դեմ: Նրանք հավաքեցին անգիտակից գյուղացիներին, վորոնք չգիտ-եցին ում յետևից գնան և կազմեցին բա-ակ:

Նրանք ուժով հավաքում եին ազգաբնակչութեան իրենց քանակում և ստիպում ելին կովել Խորհրդային իշխանութեան դեմ:

Հակահեղափոխական բանակը կոչվո մ եր՝ սպիտակ բանակ: Նրան ոգնութեան ելին գալիս ոտաբ. յերկրա կապիտալիստներն ու կալվածատերերը փ. դով, — գնեքով և գործով:

Սպիտակ բանակին ոգնում ելին նալև հոբեվորականները: Խորհրդային իշխանութիւնը բանվորներից և գյուղացիներից



կազմակերպեց իր կարմիր բանակը՝ խորհուրդների պաշտպանութան համար:

Կարմիր բանակը ջարդեց բոլոր սպիտակ բանակներին, նա հերոսաբար պաշտպանեց հոկտեմբերյան հեղափոխությունը և վերջնականապես հաղթեց հակահեղափոխականներին (ցույց տալ Պերեկոպի կովի և ուրիշ որինականություն: Յույց տալ Խայդարի կարմիր հրամանատարների որինականություն, վորպիսիքն են՝ Փրոհմզեն, Վորոշիլովը, Բուդյոնին, Չուպան, Բլուխոբեր և այլն):

Ուրիշ յերկրների բանվորները մեղ ոգնություն լեկան ոտարյերկրյա կապիտալիստների և սպիտակ բանակի դեմ մղված կռվում: Հայաստանում ևս Նոյեմբերյան հեղափոխությունից հետո՝ 1921 թ. փետրվարին դաշնակցականները փորձ արին տապալել բանվորների ու գյուղացիների իշխանությունը և վերականգնել իրենց տիրապետությունը, բայց այդ նրանց չհաջողվեց: 45 որ շարունակ Հայաստանում կռիվներ յեղան դաշնակցականների և Կարմիր բանակի միջև: Հայաստանի կարմիր բանակը վողջ յերկրի բանվորների և գյուղացիների ակտիվ մասնակցությամբ կարողացավ ջարդ ու փշուր անել դաշնակցական բանակին և փրկել խորհրդային իշխանությունը:

Բոլոր յերկրների կապիտալիստներն ալժմ ել լարված կերպով պատերազմ են պատրաստում խորհուրդների իրկրի դեմ: Կապիտալիստները չեն կարող հաշտվել այն զրության հետ, վոր մեղ մոտ յերկրի տերեր վող թե կապիտալիստներն ու կալվածատերերն են, այլ բանվորներն ու գյուղացիները:

Մյուս յերկրներում կապիտալիստներն ալժմ ել իշխանութան տերն են և ճնշում են բանվորներին: Բոլոր յերկրներում բանվորները պայքար են մղում կապիտալիստների դեմ: իշխանությունը խլելու համար:

Կարմիր բանակը կանգնած է մեր յերկրի պաշտպանության համար և պատրաստ է հակահարված տալու կապիտալիստների հարձակումներին: Կարմիր բանակը բանվորների ու գյուղացիների բանակն է: Յթե կապիտալիստները խորհրդային իշխանության դեմ պատերազմի դուրս կըգան, Կարմիր բանակը կապաշտպանի մեր յերկիրը և մյուս յերկրների բանվորների ու գյուղացիների ոգնությամբ կջարդի մեր թշնամիներին: Կարմիր բանակում կարող են ծառայել բոլոր ազգությունների միայն աշխատավորները: Աշխատավորների թշնամիները (կուլակները և մյուս ձայնազուրկները) չեն քնդուռնվում Կարմիր բանակում:

Մեր յերկրի աշխատավորները հոգում են այն մասին, վորպեպի կարմիր բանակը մարտականորեն լավ պատրաստված լինի մեր յերկրը պաշտպանելու համար:

Կարմիր բանակայինները սովորում են վողջ միայն ռազմական գործը, այլ և նրանք սովորում են դանազան դպրոցներում, ստանում են ընդհանուր կրթություն և տարբեր մասնագիտություններ: Կարմիր բանակայինները խոշոր հասարակական աշխատանքներ են տանում: Նրանք մասնակցում են խորհուրդների աշխատանքներին, ոգնում են կոլխոզներին ոգնում են գրծարաններին: Փարբիկաներին և տրանսպորտին: Կարմիր բանակը ամբարցնում է Խորհուրդների իշխանությունը, պաշտպանում է խորհրդներին և սոցիալիզմի կառուցման գործը:

Լինել Կարմիր բանակային, մեծ պատիվ է և խոշոր պատավորություն մեր յերկրի պրոլետարիատի և կապիտալիստական յերկրների աշխատավորների հանդեպ: Դպրոցականները և պիոներները կապ են պահպանում Կարմիր բանակի հետ: Նրանք նույնպես պատրաստվում են յերկրի պաշտպանության համար և մասնակցում են Պաշ-Ավիոքիմի աշխատանքներին: Կազմակերպել դպրոցում ՊԱՁ-Ավիոքիմի բջիջ, յեթե այդպիսին չկա:

#### IV. ԻՆՉ ՏՎԵՑ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՆԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ (18 Ժամ)

1. Խորհուրդներ: Հոկտեմբերյան հեղափոխությունը բանվորներին ու գյուղացիներին դարձրեց իրենց յերկրի տերը: Բոլոր ազգությունների բանվորներին ու գյուղացիները հիմա իրենք են կառուցում իրենց կյանքը նոր ձևով:

Հողը, գործարանները, ֆարբիկաները պատկանում են աշխատավորներին:

Խորհուրդները ղեկավարում են գործարանների, ֆարբիկաների և կոլխոզների աշխատանքները: Բանվորների և գյուղացիների խորհուրդներ կան ամեն մի քաղաքում և գյուղում: Խորհուրդները կազմվում են հենց իրենց աշխատավորների կողմից ընտրված լավագույն բանվորներից և գյուղացիներից: Վորք կարող են պաշտպանել ու բարելավել բանվորների, կոլխոզիկների բարալներին, չքավոր և միջակ գյուղացիների աշխատանքն ու կյանքը:

Խորհուրդներում տեղ չունեն կալվածատերերը, կապիտալիստները, կուլակները, տերտերները: Ղեկավարող դերը խորհուրդ-



դներում պատկանում են բանվորներին: Խորհուրդները պայքարում են բանվորների և գյուղացիների թշնամիների, կուլակների ֆեոդալարների դեմ (բերել որինակներ): Պետքադավարչությունը (Դ. Ու. Մ.) հանդիսանում է աշխատավորների շահերի պաշտպանը: Խորհուրդները պայքարը և աշխատանքը ղեկավարում են կոմունիստները, լավագույն, առաջավոր, գիտակից կաշուն բանվորները և կոլխոզնիկները, վորոնք հասկանում են բանվորների և աշխատավորների շահերը:

Նրանք վերականգնեցին բոլոր քայքայված ֆաբրիկաներն ու գործարանները, բարեկարգեցին այգիսիք, նրանք կառուցում են բազմաթիվ նոր գործարաններ և ֆաբրիկաներ, չերկաթուղիներ, ստեղծում են կոլխոզներ, և սովխոզներ: Շատ գործիքներ ու մեքենաներ, վորոնք առաջ ներմուծվում. ելին արտասահմանից ալժամ մեքենանք պատրաստում (բերել որինակներ) մեր գործարաններում ու ֆաբրիկաներում: Հայաստանում առաջ գործաբաններ համարյա չկային, իսկ յեղած միքանի գործարաններն էլ դաշնակցականների որոք բոլորովին քայքայվել էին: Ալժամ Հայաստանում կան բազմաթիվ գործարաններ, և ելքտրոկայաններ (թվել):

Բանվորները ալժամ աշխատում են որակյան 7 ժամ, բանվորների աշխատավաճը բարձրանում է, կառուցվում են նոր բանվորական տներ: Բանվորները ոգտվում են սանատորյաններից, հանգստյան տներից, սաանում են աբձակուրդ: Գործարաններում և ֆաբրիկաներում հոգում են նրանց աշխատանքի պաշտպանություն մասին: Բանվորներն ու նրանց յերեխաները սով. բում են զանազան դպրոցներում, կուրսերում և խմբակներում: Բանվորների համար կազմակերպվում են հոսարակական ճաարաններ. կուլտուրական հանգիստ և ալժն: (բերել կոնկրետ որինակներ տեղի իրականությունից):

Կոլխոզներում գյուղացիները բարձրացնում են յերենց նյութական դրությունը, հեշտացնում են յերենց աշխատանքները, բարձրացնում են բերքատվությունը, — շնորհիվ աշխատանքի կոլեկտիվ ձևի և մեքենաների: Կոլխոզնիկները ոգտվում են հանգստյան տներից, սանատորիաններից: Կոլխոզնիկ գյուղացիները, մենատնտեսները և նրանց յերեխաները սովորում են դպրոցներում, կուրսերում և խմբակներում: Առաջներում բնվորների և գյուղացիների յերեխաների համար մեր յերկրում չկային մանկապարտեզներ և մսուրներ: Բանվորների և գյուղացիների յերեխաների մեծամասնությունը մնում էր անգրագետ: Բավարար չափով

սովորել կարող ելին միայն կապիտալիստները, կալվածատերերը, առևտրականների և կուլակների յերեխաները:

Խորհրդային յիշանությունը ծավալում է կուլտուրական շինարարությունը գյուղերում բարելավում և ազգաբնակչության առողջապահությունը, բժշկական ոգնությունը ընդհարձակել ու դարձրել և հանրամայել:

Կոլխոզնիկները սերտորեն կապված են բանվոր դասակարգի հետ: Բանվորներն ոգնում են կոլխոզնիկներին և բոլոր չքավոր ու միջակ գյուղացիներին, վերակառուցելու յրենց կյանքը նոր ձևով: Նրանք շեֆություն են անում կոլխոզների վրա: Կոնկրետ փաստեր տվյալ գյուղի կյանքից կոլխոզնիկների և մյուս գյուղացիները դրություն բարելավման վերաբերյալ: (Ուսումնասիրել և պարզել տվյալ դպարոցի շեֆ աշխատանքների դրությունը):

Խորհուրդների յշխանությունը հղգ է տանում բանվորներին, գյուղացիներին և բոլոր աշխատավորների մասին: Խորհուրդները ոգնում են բարելավելու բանվորների և կոլխոզնիկների կյանքը:

Առանց գիտություն և տեխնիկային տիրապետելու անհնարին է կյանքը բարելավել: Խորհուրդներն ոգնում են աշխատավորներին տիրապետելու գիտությունը և տեխնիկան: Խորհրդային յիշանությունը բարձրագույն ուսումը մատչելի յե դարձրել աշխատավորության համար:

Բանվորների և գյուղացիների համար նա բաց է տրել բանֆակներ և զանազան գասընթացներ, նա մոտեցրել է դպրոցը ազգաբնակչությանը և հիմա մեր ԲՈՒՀ—երում սովորողների մեծ մասը բանվորներ և գյուղացիներ, կամ նրանց զավակներն են: Խորհրդային յիշանությունը բոլոր որենքների նպատակն է ապահովել բանվորների և աշխատավորների շահերը: Ալժ որենքներով մոլոր ազգությունների աշխատավորությունը, կանայք և ազամարդիկ ունեն հավասար յրավունքներ:

#### V. ՀՈԿՏԵՄԲԵՐԹԱՆ ՀԵՂԱՓՈԾՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՆԸ

ԲԱՆՎՈՐՈՒՆԻՆԵՐԻ, ԳԵՂԱՅՈՒՆԻՆԵՐԻ ՅԵՎ

ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ. (12 ժամ)

Կապիտալիստների և կալվածատերերի ժամանակ բանվորուհիների և գեղյուհիների աշխատանքը հատկապես ծանր էր: Տղամարդկանց հետ կատարած հավասար աշխատանքների համար նրանց վճարում ելին ավելի քիչ և կանանց ստիպում ելին կատարել յերենց ուժերից վեր աշխատանքներ: Կնոջ վրա բացի



զրոնից ընկած ելին նույնպէս տնային տնտեսութեան ահագին աշխատանքները: Կնոջը պահում ելին խավարի մեջ, չելին թուր-լատրում սովորելու, պահում ելին կրօնի սարսափի տակ, լին-թարկում ելին տղամարդկանց իշխանութեանը:

Այժմ կինը աղտագրվում եւ Նրա առաջ բացվում եւ լայն հնարավորութիւն հասարակական աշխատանքներին մասնակցելու եւ արտադրութեան մեջ ներգրավելու համար: Խորհրդային իշխա-նութիւնը հոգում եւ կանանց լուսավորութեան մասին: Կրօնը խանգարում եւ նոր կենցաղի համար մղվող պայքարին: Հոգեվո-րականները պայքարում են նոր կենցաղի եւ կնոջ ազատագրման դեմ (որինակներ տեղի իրականութիւնից):

Խորհրդային իշխանութիւնը բարելավում եւ լեւելեանների կենցաղը: Մինչ հեղափոխութիւնը աշխատավորների յերեխանե-րը շատ վատ պայմաններում ելին: Նրանք կատարում ելին ծանր աշխատանքներ, գործարաններում, արհեստանոցներում, գյուղա-տնտեսութեան եւ տնային տնտեսութեան մեջ: Ներկայումս մեր չերկրում ավելի ու ավելի շատանում են մանկական հիմնարկնե-րը: Յերեխանների կենցաղը բարելավվում եւ, պայքար եւ մղվում տնապատանութեան դեմ եւ վերացվում եւ աղբալիսին: Մեր չեր-կրում մտցված եւ ընդհանուր պարտադիր ուսում: Բոլոր չերեխա-նները հիմա սովորում են: Չքավորների չերեխանները ոգնութիւն են ստանում խորհուրդներից եւ հասարակական կազմակերպու-թիւններից: Պարտուր հարկավոր եւ նրա համար, վորպեսզի մենք ավելի լավ պատրաստվենք նոր կյանքի եւ սոցիալիզմի կառուցման մասնակցելու եւ դասակարգային թշնամու դեմ պայքարելու հա-մար: Հոկտեմբերիկներն ու պիոներները նույնպէս աւերվ են պայքարում չերեխանների կենցաղի բարելավման համար եւ ոգ-նում են կանանց՝ դեռեւս գոյութիւն ունեցող ընտանեկան ճնշումներից ազատագրելու համար մղվող պայքարում: (Բերել կոնկրետ որինակներ տվալ գյուղի կամ քաղաքի կյանքից, կա-նանց գրութեան եւ գոյութիւն ունեցող հին կենցաղի մնացորդ-ների եւ դրանց դեմ տարվող պայքարի մասին):

IV. ՀՈԿՏԵՄԲԵՐԻՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՅՐԵՑ ԲՈՂՈՐ ՍԶԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆ ԲԻ ՅԵՎ ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՊԱՅԲԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ (20 Ժամ)

Խորհուրդների չերկրում վորպէս մի ընտանիքում համերաշխ կերպով ապրում, աշխատում եւ պայքարում են տարբեր ազգու-

թիւնների ընկերներն ու գյուղացիները: Նրանք ապրում են տարբեր վայրերում, խոսում են տարբեր լեզուներով, բայց բոլորն եւ միեւնոյն հոգսն ունեն. ավելի շատ գործարաններ, կոլխոզներ եւ սովխոզներ, նրանց աշխատանքի բարելավումը, կյանքը դարձնել բոլոր բանվորների եւ գյուղացիների համար ու-րախ եւ վոչնչացնելով դասակարգերը՝ վերջ տալ շահագործմանը: Բոլորի համար եւ միեւնոյն թշնամիներն են կալվածատերերը, կու-լակները, կապիտալիստները եւ տարբեր կրօնների հոգեվորական-ները: Բոլոր ազգութիւնների աշխատավորները դասակարգային թշնամու դեմ մղած ընդհանուր պայքարում մի նպատակ ունեն՝ պաշտպանել հոկտեմբերյան հեղափոխութեան նվաճումները, եւ կառուցել սոցիալիզմը: Միայն բոլոր բազգութիւնների աշխատա-վորների միատեղ պայքարի մ. ջոցով մենք կկառուցենք սոցիալիզմ եւ կհաղթենք բոլոր թշնամիներին: Ցարի, կապիտալիստների եւ կալվածատերերի իշխանութեան ժամանակ տարբեր ազգութիւն-ների (ժողովուրդների) աշխատավորներին զրգում ելին միմիանց դեմ: Նույնպիսի դրութիւն գոյութիւն ունեն նաեւ Հայաստա-նում դաշնակցականների տիրապետութեան ժամանակ, չերք հայերն ու թուրքերը իրար կոտորում ելին (թուրքերի կոտորածը Զանգիբազարում, Վեդիում եւ այլուր): Ցարական իշխանութիւնն ավելի շատ եւ ճնշում մյուս ազգութիւնների աշխատավորներին: Խորհուրդների իշխանութիւնը Բոլոր ժողովուրդներին հավասար իրավունքներ տվեց: Այժմ խորհուրդների իշխանութեան ժամա-նակ Խորհրդային միութեան բոլոր ազգութիւնները պայքարում են միասին, կառուցում են միասին եւ այդ պայքարի ու շինարա-բութեան մեջ ոգնութիւն են ցույց տալիս միմիանց: Այն ազգա-լին հանրապետութիւնները (ժողովուրդները) վորոնք առաջ բո-լորովին արդյունաբերութիւն չունեն, ներկայումս նրանց մոտ աճում են ֆաբրիկաները ու գործարանները, կառուցվում են չերկաթուղիներ, կազմակերպվում են կոլխոզներ, ու սովխոզ-ներ: Այն ժողովուրդները, վորոնք առաջ բոլորովին անգրագետ ելին, այժմ ձեռք են բերել գիր ու գրականութիւն եւ անցել են ընդհանուր գրագիտութեան (քղեր):

Աշխատավորութեան միջազգային համերաշխութեան ու պայ-քարին դեմ են դուրս գալիս բուրժուաները, կուլակները, դաշնակ-ցականները, հոգեվորականները: Պայքար դրանց դեմ ու ինտեր-նացիոնալ դաստիարակութեան ուժեղացումը դպրոցում:

Տարբեր ազգութիւնների դպրոցականները եւ պիոներները



կապ են պահպանում միմյանց հետ: Դպրոցականները կապ են հաստատում նաև մյուս յերկրների պատանակական կազմակերպությունների հետ:

Մյուս յերկրներում դեռ մինչև այժմ ել փոքր ու հետամնաց ազգությունները ճնշվում ու շահագործվում են կապիտալիստական պետությունների կողմից (տալ պատկերներ փոքր ազգությունների, կիսագաղութային և գաղութային յերկրների ճնշման ու հարստահարման ու պայքարի մասին):

ԽՍՀՄ-ի բանվորներն ու գյուղացիները բոլոր ճնշված ժողովուրդների բարեկամներն են: Բոլոր յերկրների բանվորները պետք է ոգնեն ճնշված ժողովուրդներին իրենց ազատագրման համար մղվող պայքարում: Բոլոր յերկրների կապիտալիստները բանվորների, գյուղացիների և ճնշված ժողովուրդների թշնամիներն են:

### Գ. ԽՈՒՄԲ

#### I ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՅԳՄԱՐԸ ՄԻՆՁԵՎ 1905 ԹԻՎԸ (18 Ժամ)

Անցյալի հեղափոխական պայքարի ուսումնասիրության նպատակը.— Բանվորների և գյուղացիների 1917 թ. հոկտեմբերյան հաղթանակը հետևանք էր կալվածատերերի և կապիտալիստների դեմ նրանց տարած յերկարատև և համառ պայքարի: Այդ հաղթանակն ապահովվել է բոլշևիկյան կուսակցության ղեկավարության շնորհիվ, կուսակցության, վորն ստեղծվել է ընկ. Լենինի: Մերանցյալի պատմությունը, — բանվորների և գյուղացիների դասակարգային պայքարի պատմությունը, — ակնառու կերպով ցույց է տալիս, վոր բանվորների և գյուղացիների հաղթանակը հնարավոր է միայն բանվոր դասակարգի կուսակցության՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ:

1. Դյուղացիների դուրքյունը նորաստիության ժամանակ, Կարժամանակ, յերբ մեր յերկրում չկային գործարաններ, չկային կապիտալիստներ և բանվորներ:

Ամեն բան հասարակ գործիքների ոգնությամբ արտադրում էին գյուղացիները և արհեստավորները: Ամբողջ հողը պատկանում էր կալվածատերերին: Գյուղացիները և արհեստավորներն ամբողջովն էին իրենց կալվածատիրոջ, պարտավոր էին նրա համար աշխատել (զաղափար տալ կոռ և բեզյառի մասին) իրավունք չունեին նրա մոտից հեռանալ: Նրանք համարվում էին

կալվածատիրոջ սեփականությունը: Կալվածատերերը նրանց դատում ու պատժում էին, վարվում էին նրանց հետ ինչպես ցանկանում էին, կարող էին նրանց վաճառել մի ուրիշ կալվածատիրոջ: Յեկեղեցական հողերի վրա ապրող գյուղացիների ծանր գրությունը: Ազգային փոքրամասնությունների դրությունը ցարական Ռուսաստանում (տալ կալվածատիրոջ կալվածի, ճորտատիրական գյուղի պատկերներ, կալվածատերերի կալախանությունների որինակներ, ազգային փոքրամասնությունների ճնշման ու կողոպուտի որինակներ: Ընդել որինակներ ու պատկերներ Նիդերլանդների, Վրաստանի, Հայաստանի կնյոզների, մեկիքների ու ճորտ գյուղացիների կյանքից, Նյմիսի վաճառական հողերի վրա ապրող գյուղացիների շահագործումից, անգրկովկասյան ժողովուրդների աշխատավորության ճնշումից ու շահալործումից):

Գյուղացիներին հնազանդության մեջ պահելու համար կալվածատերերին ոգնություն էր հասնում ցարական իշխանություններն իր բանակով, վոստիկանությամբ ու բանտերով: Թագավորն էր անպայման կալվածատերն էր: Թագավորին ու կալվածատերերին էին նրանք ծառայում յեկեղեցին ու տերտերները: Գյուղացիք հաճախ կալվածատիրական ճնշումից ու հարստահարությունից ազատվելու համար փախչում էին անտառները, ծալրամասերը, հաճախ ապստամբում էին հարստահարիչների դեմ (գյուղացիական պայքարի ձևերը.— հրդեհումներ, ապստամբություններ, կալվածատերերի սպանություններ), բայց վո՞րն անգամ գյուղացիությունը չի կարողացել հաղթել իր անկազմակերպվածության հետևանքով: Բացառել գյուղացիների անկազմակերպվածության պատճառները, վոր բոլորն են նրանց տնտեսական դեությունից: Բերել պուզաչկյան շարժման որինակը:

Միայն բանվոր դասակարգը կարող է գյուղացիներին տալ հեղափոխական ղեկավարություն:

2. Ճորտատիրության վերացումը յեվ ադյունաբերության զարգացման ազդեցություն: Արդյունաբերության զարգացման ազդեցության տակ, ցածր գյուղացիական խոռվությունների ազդեցության տակ, ցարական կառավարությունը 1861 թ. հարկաբարված էր վերացնել ճորտատիրական իրավունքը: Սակայն, դրանից շահեցին միայն կալվածատերերը և կապիտալիստ-գործարանատերերը: Բոլոր ամեկալվածատերերը և կապիտալիստ-գործարանատերերի ձեռքին, նալավ հողերն առաջվա նման մնացին կալվածատերերի ձեռքին, գյուղացիներն ստացան քիչ և այն էլ ասինավատ հողերը վորք համար նրանք 50 տարվա ընթացքում պարտավոր էին կալվա-



ձեռքերին վճարել լեռնման գումարներ (выкупные платежи) և բացի այդ՝ ցարական իշխանությունը՝ առերթելու Երևան, գյուղացիների մեջ սկսվում է շերտավորում։ Դրանցից մի մասը, կալվածատերերի մոտիկ ծառաներն զբաղվելով առևտրով մյուս գյուղացիներին շահագործելով՝ կուլակներ են գառում։ Գյուղացիություն հիմնական մասսան՝ միջակ գյուղացիությունը շահագործվելով կալվածատերերի, կուլակների, կապիտալիստների կողմից՝ ավելի ու ավելի լի աղքատանում ու քայքայվում։ Քաղաքավոր գյուղացիները թողնում էին գյուղատնտեսությունը և գնում էին աշխատելու գործարաններում, վորոնք ճորտատիրության վերացումից հետո արագ կերպով զարգանում են։ Փախչելով կալվածատիրական ու կուլակային հարստահարությունից ու ճորտությունից և բանվորներ դառնալով, նրանք ընկնում էին կապիտալիստական դաժան շահագործման ու ստրկության զիրկը (հեբել որինակներ Հայաստանի նախահեղափոխական գյուղի քայքայումից և քայքայվող գյուղացիների մասսայական դժբեռից ղեպի արդյունաբերական կենտրոնները՝ Բագու, Տփլիս և այլն)։

3. Բանվոր դասակարգի դրույունը յեվ պայմար։ Բանվոր դասակարգի դրությունը ցույց տալ նախկին վորեն կապիտալիստական գործարանի որինակի վրա։ — ծանր բնակարանային պայմաններ, ցածր աշխատավարձ, կրկնակի կողոպտում գործարանային խանութների միջոցով, տուգանքներ, չերկար բանվորական որ, կիսաքաղց կյանք, կանացի և յերեխաների աշխատանքի շահագործում։

Արդյունաբերության զարգացման համարյա առաջին օրերից բանվորները կապիտալիստների դեմ պայքարում են իրենց դրություն թարեւաման համար։ Բանվորների պայքարի ձևերը, — գործադուլներ, ցույցեր, ապստամբություններ, — տարբերվում են գյուղացիների պայքարի ձևերից։ Բանվորներն սկսում են հանդես գալ ավելի կազմակերպված։

Բացատրել, վոր բանվորների քաղաքական և տնտեսական դրությունը միաձուլում են նրանց և ոգնում են նրանց հասկանալու՝ շահագործողների դեմ տարվելիք ընդհանուր պայքարի անհրաժեշտությունը։ Կազմակերպվածություն նշանակությունը հեղափոխական պայքարի համար։ Բերել որինակներ բանվորների աշխատակերպ և կազմակերպված յելույթներից։

4 Բանվոր դասակարգի կուսակցության սեղծումը յեվ նրա նպատակները։ — Բանվորական կազմակերպությունների հանդես

գալը։ Բերել Ստեփան Խալատչիկի, Մոյսեյենկոյի որինակները։ Բանվորական կազմակերպությունների ու խմբակների առաջնալն անդրկովկասում։ Ռուսաստանի բանվորական կազմակերպություններն ոգտագործում են արտասահմանյան (Ֆրանսական, գերմանական, Անգլիական) բանվորների հեղափոխական պայքարի փորձը, քանի վոր արտասահմանում արդյունաբերությունն առաջացել ու զարգացել է ավելի վաղ, դրա հետեանքով ել ավելի վաղ և սկսվել կազմակերպված հեղափոխական շարժումը։ Համառոտ գաղափար տալ Փարիզի կոմունայի մասին։ Բանվորական մարտական զինվորները, — Մարքս և Ենգելս։ Անցյալ դարի վերջերին Լենինը մեր չեղկում բանվորական խմբակներից կազմակերպում է բանվոր դասակարգի հեղափոխական կուսակցությունը (բոլշևիկներ)։ Մարքս, Ենգելս և Լենինը բանվոր դասակարգի և նրա կուսակցության նպատակն են դարձրել, — բանվորների և գյուղացիների կողմից զբաղել իշխանությունը՝ հողի և գործարանների մասնավոր սեփականության վերացման և սոցիալիզմի կառուցման համար։ Սոցիալիզմը մի հասարակություն է, վորտեղ չկա մարդու կողմից մարդու շահագործում և ճնշում, և, վորտեղ չկա մարդու կողմից մարդու շահագործում և ճնշում, չկա մարդկանց բաժանում դասակարգերի, վորտեղ բոլորն աշխատում են գործարաններում և հողի վրա, վորոնք պատկանում են մոռ թե առանձին մարդկանց, այլ ամբողջ հասարակության։ Բոլշևիկները բոլոր ուժերը մարդիկ գործադրում են բնության դեմ պայքարելու և բոլորի համար ավելի լավ, յերջանիկ ու կուլտուրական կյանք կառուցելու համար։

5. Ցարական կառավարության պայքար հեղափոխական բանվորների յեվ կուսակցության դեմ։ — Կուսակցության աշխատանքի հետեանքով աճում է բանվոր դասակարգի գիտակցությունը, և անցյալ դարի վերջերից զարգանում է մասսայական բանվորական շարժումը։ Ցարական կառավարությունը պաշտպանելով բուրժուազիային՝ իր վողջ ուժերը, գործը, վոստիկանությունը, յեկեղեցին նետում է հեղափոխական բանվորների և հանդիսական բանառաջնորդների դեմ։ Բանառքը լցվում են հեղափոխական բանվորներով։ Լենինին, Ստալինին տքսորում են հեռավոր Սիբիր, նրանց հետ միասին՝ բազմաթիվ այլ հեղափոխականներին։ Ցարական կառավարությունն սկսում է պաշտպանել ձևերի հետ միասին լայն կերպով կիրառել նոր ձևեր։ — ոգտվելով մասսաների անդիտակցությունից ու հենվելով այդ ազդությունների բուրժուազիայի ու բուրժուական կուսակցությունների վրա, — նա մի աղ-



գություն լարում և մյուսի դեմ, կազմակերպում և ջարդեր, կոտորածներ (հրեաների ջարդերը, հայ-թուրքական կոտորածներն Անդրկովկասում): Յեկեղեցին ել ոգտագործելով նեռամնաց մասաների անգի ոակցությունը՝ ոգնում և վոստիկանությանը՝ ջարդեր կազմակերպելու: Բանվորական կազմակերպությունները քայքայելու համար վոստիկանությունը գաղտնի կերպով նրանց մոտ պրովակատորներ և ուղա կուս: Բայց բանվոր դասակարգի գիտակցությունն աճում և շնորհիվ կուսակցության աշխատանքի և հեղափոխական պայքարի փորձի: Բանվորների գործադուլները և գյուղացիական խռովությունները վեր են ածվում զինված բնդհարման՝ վոստիկանության հետ Բերել՝ վոստիկանության դեմ բանվորների պաշտպանության որիբակներ (1901 թ. Որոսիոյում) պաշտպանությունը և այլն): Իրա հետ կապված՝ պարզել Մալիսի 1-ի նշանակությունը, վորպես բանվորների պայքարի միջազգային որվա: Թագավորը և նրա սպասավորներն ի վիճակի չէին կանգնեցնելու սկսված շարժումը, և լերկրում պայթեց առաջին ուսակական հեղափոխությունը:

## II. 1905 թ. ՀԵՂ ԿՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ

1. Հեղափոխության սկիզբը. — 1904 թ. դեկտեմբերին Պետերբուրգում՝ Պուտիլովի գործարանում գործադուլ բռնկվեց: Իրան անմիջապես հետևեց Պետերբուրգի բանվորության մեծամասնության գործադուլ: Վոստիկանական պրովակատոր Դապոն քահանայի կողմից խաբված՝ Պետերբուրգի բանվորները 1905 թ. փետրվարի 9-ի կիրակի որը գնում են Թագավորի մոտ խնդրելու, վորպեսզի լավացնի իրենց դրությունը (սալ խաչվածներով ու սրբերի պատկերներով՝ խաղաղ ցույցի նկարագրությունը): Բանվորների կրոնականության շնորհիվ Դապոնին հաջողվում և խաբել նրանց: Բանվորների գնդակահարման պատկերներ Ձմեռային պալատի մոտ և քաղաքի այլ վայրերում: Այդ դնդակահարությունը նույնիսկ անգիտակից բանվորների մեջ բուռն զայրույթ և առաջացնում ցարի դեմ: Հեղափոխական կազմակերպությունների ղեկավարությամբ վոտքի լի լիւնում վողջ Ռուսաստանի բանվորությունը. — մասսայական գործադուլներ, դրանց ազդեցության տակ՝ գյուղացիական ապստամբություններ (զրա հետ կապված բացատրել, թե ինչու լինը մենը ալժմ տոնում «Արշունոտ կիրակին»):

2. Չորի մասնակցությունը հեղափոխությանը. — Ցարական բանակը կազմված ևր բանվորներից և գյուղացիներից, վորոնք կարվում էին աշխատավոր մասաներից և սպաների միջոցով վարժվում էին ու պատրաստվում էին պաշտպանելու ցարական կարգերը և բուրժուաների ու կալվածատերերի շահերը: 1905 թ. հեղափոխության ժամանակ զինվորների և մատրոսների ամանագիտակից մասն ապստամբվում և սպաների և ցարական կարգերի դեմ և անցնում և հեղափոխական ժողովրդի կողմը: Պատյում էին զրահակրի վրայի ապստամբությունը: Չորքի մեծամասնությունն այնուամենայնիվ իր անգիտակցության հետևանքով մնում և Թագավորի կողմը:

3. Ցարի պայքարը հեղափոխության դեմ. — Ցարական կառավարությունն իր բոլոր զինվորական ուժերը գործադուլում և հեղափոխությունը ճնշելու համար: Կազմակերպվում և սև հարյուրակ, վորը վոստիկանության ղեկավարությամբ կազմակերպում և հրեաների և այլ ազգությունների ջարդեր, սպանում և հեղափոխականներին (բերել ուրիակներ հրեական, հայ-թուրքական ջարդերից): Յեկեղեցին ոգնում և ցարին ու սև հարյուրակներին՝ ալդ գործում: Բանվորական ցույցերի դեմ պայքարելու համար լեկեղեցին կազմակերպում և խաչակիր յերթեր (крестные ходы): Հեղափոխականների կարմիր դրոշակներին հակադիր՝ լեկեղեցին կազմակերպում և իր խաչակիր յերթերը՝ սպիտակ դրոշակներով: Հավատի և աստու ոգնությամբ տերտերներին հաջողվում և անգիտակից բանվորների ու գյուղացիների մի մասին իրենց հետևից տանել: Արտասահմանյան կապիտալիստները փողով ոգնում էին ցարին՝ հեղափոխությունը ճնշելու համար:

4. Խորհուրդներ յեկ բանվորների ղեկաված ապստամբություններ. — Լենինը ղեկավարելով բոլշևիկների կուսակցությունը՝ առաջարկում և բանվորներին պատրաստել զինված ապստամբության համար: 1905 թ. հոկտեմբերին կազմակերպվում և բանվորական պատգամավրներ Պետերբուրգի խորհուրդը, իսկ դեկտեմբերին բոլշևիկների ղեկավարությամբ ու Լենինի գլխավորությամբ՝ բանվորները Մոսկվայում և այլ քաղաքներում անցնում են զինված ապստամբության: Մոսկվայի Պրեսնյա քաղաքամասի ապստամբությունը: Ապստամբությունը ղեկավարում ևր բոլշևիկները կուսակցությունը (սեքենավար Ուխտոմսկու որինակը): Մասնակի ապստամբություններ այլ քաղաքներում: ապստամբություններ Անդրկովկասում: 1905 թ. հեղափոխությունը



Անդրկովկասում. առաջին հեղափոխական պայքարի պատերազմի ժամանակահատվածում հեղափոխական կուսակցության (բոլշևիկների) դերը, բուրժուական կուսակցությունների (գաշնակների) դերը:

5. Ցարական կառավարության դատաբանական բռնությունները հեղափոխության դեմ:— Հեղափոխության պարտությունը, Յերկրի բոլոր անկյուններն ուղարկվեցին պատժիչ լորտիմբեր, վորոնք վաղընչացնում էին ամբողջ գյուղեր՝ չխնայելով ձերուներին, կանանց և յերեխաներին. մասսայական ձերբակալություններ, դաշտային դատարանները հազարավոր մարդկանց կախաղան, բանտ ու աքսոր էին ուղարկում. «սև հարյուրակները» շարունակում էին ջարդեր կազմակերպել (բերել որինակներ, թե ինչպես ժամանակակից բուրժուական յերկրներում կապիտալիստները ճնշում են հեղափոխական պայքարը):

6. 1905 թվի հեղափոխության պայքարային պահանջները յեվ դրանք.— 1905 թ. հեղափոխությունը գյուղացիության մեծագույն մասը հանդես չեկավ հեղափոխությունը պաշտպանելու. գյուղացիությունը դեռ հետ եր մնում բանվորների հեղափոխական շարժումից, գործի մեծ մասը դեռ ցարի կողմն եր: 1905 թվի հեղափոխության փորձը հեշտացրեց 1917 թվի հոկտեմբերի հաղթությունը. 1905 թ. հեղափոխությունն ապացուցեց, վոր անհրաժեշտ ե բանվորների և գյուղացիների սերտ դաշինքը՝ բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ, անհրաժեշտ ե հեղափոխության կողմը գրավել գործը: 1905 թ. հեղափոխության ճշմարիտ հետ ուղիները Լենինի ղեկավարությամբ հավաքում են իրենց սեփքը և շարունակում են ղեկավարել հեղափոխական պայքարը: Լենինյան «Պրավդա» լրագրի դերը, վորպես հեղափոխական շարժման կազմակերպչի, բերել Լենինի գնդականարման որինակը:

III. ՀԱՅԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴՅՈՒՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ (18 ժամ)

Համաօխարհային պահերազմը.— 1914 թվին ցարական կառավարությունը սկսեց պատերազմը: 1914 թ. պատերազմը կոչվում ե համաշխարհային պատերազմ այն պատճառով, վոր նրանում մասնակցում էին համարյա բոլոր յերկրները (Ռուսաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Ճապոնիա, Ամերիկա և այլն): Պատերազմն սկսեցին կապիտալիստներն ու թագավորները, վորպեսզի զավթեն նոր հողեր և նորից բաժանեն առաջուց զավթածները: Ցարը և նրա սպասավորները, պրովակատորները

և տերտերները, մասսաների մեջ ազդեցության ելին տանում հոգուտ պատերազմի լուրերով ինչպես մեր, այնպես ել այլ յերկրների բանվորներին ու գյուղացիներին: Ցուրաբանչուր յերկրում տերտերներն աստծու անունով համոզում էին բանվորներին ու գյուղացիներին՝ սպանելու ուրիշ յերկրների իրենց նման բանվորների ու գյուղացիների: Բոլշևիկները դեմ էին պատերազմին և մերկացնում էին ցարական սպասավորներին՝ ապացուցելով, վոր պատերազմը տարվում ե կապիտալիստների հաբառացման համար: Բոլշևիկներին, դրա համար հալածում, աքսորում, գնդակահարում էին, բայց կանգնեցնել նրանց հեղափոխական պայքարը ցարական կառավարություն իվիճակի չեր: Բոլոր յերկրներում պատերազմի հետևանքը յեղավ տնտեսության քայքայումը, վորից բացառապես տո. ժում էին բանվորներն ու գյուղացիները: Պատերազմում վիրավորվեցին ու սպանվեցին բազմաթիվ միլիոն բանվորներ ու գյուղացիներ: Բազմաթիվ ընտանիքներ, այրեր ու վորրեր մնացին անապաստան, առանց հացի ու աշխատողների: Միայն կապիտալիստները, կալվածատերերը, կուլակները և նրանց սպասավորներն էին շարունակում ճոխ ապրել և պատերազմից ել ալել հարստանալ: Պատերազմն սկսվելուց 3 տարի անց, 1917 թվի փետրվարին (հին տոմարով) բռնկեց նոր հեղափոխություն: 1914 թ. համաշխարհային պատերազմը և հայ բուրժուազիան ու նրա կուսակցությունը դաշնակցությունը. կառավարական խմբերը և աշակցություն իմպերիալիստներին. դրա արդյունքը.— կոտորած, գաղթ, քայքայում, սով: (Բերել որինակներ աշխատավորության հատկապես գաղթականների դրությունից այդ շրջանում:

Ինչպես 1905 թ., այնպես ել փետրվարյան հեղափոխությունը զլխավում են Պետրոգրադի բանվորները: Պետրոգրադի հետևից ապստամբում են մյուս քաղաքները: Զորքն անցնում ե հեղափոխության կողմը: Թագավորը հարկադրված ե լինում իշխանությունից հրաժարվել: Սակայն իշխանությունը մնում ե կապիտալիստների և կալվածատերերի ձեռքին: Նրանք խաբում են բանվորներին ու գյուղացիներին և շարունակում են պատերազմը: Բանվորն, բն ու գյուղացիներն 1905 թ. որինակով կազմակերպում են խորհուրդներ և բալշևիկների ղեկավարությամբ պայքարում են կապիտալիստների դեմ:

2. Հոկտեմբերյան հեղափոխությունը.— 1917 թ. ապրիլին առաջադրված խնդիրը պալիստ և Լենինը: Լենինի լոզունգներն են. — լա-



դադությունն ժողովուրդներին, իշխանութիւնը խորհուրդներին-  
հողը գյուղացիներին, գործարանները բանվորներին: Բուրժուա-  
դիան դաժան անորոշ և կերպառում հեղափոխական բանվորներ և  
առաջին հերթին բոլշևիկներին դեմ: Լենինը հարկադրված է լի-  
նում թաղանթել: Պետրոգրադից վաղ հեռու (շալաշում), վորտեղից  
շարունակում եր գեկավարել կուսակցութիւնը: Բոլշևիկներին և  
բոլշևիկների լոգուններին ազդեցութիւնը շարունակում է անել:  
Չորքն ու գյուղացիները մասսայաբար անցնում են բոլշևիկներին  
կողմը: Ապստամբում են ճնշված ազգութիւնները: Հոկտեմբերի  
25-ին Պետրոգրադում, իսկ հետո այլ քաղաքներում բոլշևիկները  
Լենինի գեկավարութեամբ կազմակերպում են բանվորների զինա-  
պատամբութիւն և խորտակում կապիտալիստների իշխանու-  
թիւնը (տալ Չմեռալին պալատի գրաւման, «Ավրորա» ռազմա-  
նավիճակի հեղափոխութեան մասնակցութեան, Կրեմլի գրաւման և  
այլ պատկերներ): Հոկտեմբերյան որերին Լենինի գեկավարու-  
թեամբ Պետրոգրադում հաւաքվեց ամբողջ լերկրի խորհուրդներին  
համագումարը: Լենինի առաջադրութեամբ համագումարն ընդու-  
նում է գեկերեւել՝ պատերազմը դադարեցնելու և հողը գյուղա-  
ցիներին հանձնելու մասին: Այդ համագումարում ել ընտրվում է  
խորհրդային կառավարութիւն՝ Լենինի գլխավորութեամբ: Խոր-  
հրդային իշխանութեան գլխավոր ձեռնարկումները. — գործարա-  
նները և լերկաթուղիները հայտարարվում են բանվորների և գյու-  
ղացիների պետութեան սեփականութիւն: Ըրոր քաղաքներում և  
գյուղերում կազմակերպվում են խորհուրդներ: սահմանվում է  
ըրոր ազգութիւնների աշխատավորների իրավունքների հավա-  
սարութիւն, սահմանվում է աշխատավոր տղամարդկանց ու կա-  
նանց իրավունքների հավաստեցութիւն: Խորհուրդներում մաս-  
նակցելու իրավունքից զրկվում են հարստահարիչները, — կապի-  
տալիստները, կալվածատերերը, կուլակները և նրանց սպասա-  
վորները՝ վոստիկանները, ժանդարմները և տերտերները: Հոկտեմ-  
բերյան հեղափոխութիւնը, — դա բանվոր գասակարգի առաջին  
իսկաաաար հաղթանակն է կապիտալիստների նկատմամբ:

3. Վաղաքացիական կռիվներ. — Հոկտեմբերյան հեղափոխու-  
թիւնից հետո բանվորների և գյուղացիների պայքարը չվերջա-  
ցավ: Կալվածատերերը, կապիտալիստները և կուլակները ձգտում  
են վոչնչացնել խորհրդային իշխանութիւնը: Արտասահմանյան  
կապիտալիստների օգնութեամբ նրանք կազմակերպում են սպի-  
տակ բանակ և ըրոր կողմերից շրջապատում են խորհրդային պի-

տութիւնը. — Գերմանական զորքերն Ուկրաինայում, Հյուսիսում  
գեներալ Միլլեր՝ Անգլիական զորքերի սժանդակութեամբ, Սիբի-  
րում՝ Ադմիրալ Կոլչակը անգլիական, ամերիկյան և ճապոնական  
զորքերի սժանդակութեամբ, Լենինգրադի մոտ՝ գեներալ Յուդե-  
նիչը անգլիական նավատորմի սժանդակութեամբ, հարավից՝  
գեներալ Իսնիկինը և բարոն Վրանգելը անգլիական և ֆրանսի-  
ական զորքերի սժանդակութեամբ: բացի այս՝ կուլակային բան-  
դիտ Մախնոն իր հրոսակախմբերով թալանում է Ուկրաինան,  
Արեւմուտքից լեհական պաները և ուրիշներ...:

Յերկրի ներսում նույնպէս զրութիւնը ծանր եր: Սպանե-  
րից և կուլակներից կազմված սպիտակ բանդաները ապստամբու-  
թիւններ ելին կազմակերպում, սպանում ելին բանվոր դասա-  
կարգի գեկավարներին: 1918 թվին նրանք սպանեցին Վլադա-  
ւիւն և Ուրիցկուն և վերավորեցին Լենինին: Սպիտակ բանակի  
գեմ կովկուս համար բոլշևիկյան կուսակցութիւնը ստեղծում է  
բանվորազյուղացիական Կարմիր բանակ: 3-ամյա հերոսական  
պայքարի ընթացքում Կարմիր բանակը ջարդում է ըրոր սպի-  
տակ գեներալների և նրանց հովանավորող ռադրիկրյա կապի-  
տալիստների զորքերը: (Տալ քաղաքացիական կռիւների և մար-  
տերի պատկերներ):

Կռիւները գեկավարում են բոլշևիկները — ՄՏԱԼԻՆ, ՎՈՐՈ-  
ՇԻԼՈՎ, ՅՐՈՒԼԶԵ, ԲՈՒԴՅՈՆՆԻՅ, ՉԱՊԱՅԵՎ:

Խորհրդային բանվորներին և գյուղացիներին այդ պայքա-  
րի մեջ ոգնում ելին արտասահմանյան բանվորները: Նրանք կազ-  
մակերպում ելին զործադուլներ, լոգունդ ունենալով՝ «ձեռքերդ  
հեռու Խորհրդային Միութիւնից», նրանք կանցնում ելին սպի-  
տակ զորքին ուղարկվող զինամթերքների փոխադուլը, սպիտակ  
զորքերին ոգնութեան ուղարկվող զորքերում նրանք ապստամ-  
բութիւններ ելին կազմակերպում: (Ապստամբութիւնը ֆրան-  
սիական նավատորմում Սև ծովում Մարտիի գեկավարութեամբ):

Կարմիր բանակի հաղթանակը ապահովված եր, վորովհետե  
բանվորների և գյուղացիների պայքարը ամուր և հաստատակամ  
գեկավարում եր բոլշևիկյան կուսակցութիւնը, և բանվորներն ու  
գյուղացիները գլխեյին, վոր այդ պայքարն իրենց շահերի հա-  
մար է, կապիտալիստների և կալվածատերերի լծից ազատազրկելու  
համար:

Ուրիշ լերկրներում — Գերմանիայում, Բուլղարիայում, Իտա-  
լիայում, Վենգրիայում — այդ նույն թվերին հեղափոխութիւններ



բունկվեցին, բայց բուրժուազիային հաջողվեց ամենազատան անա-  
բեկման և սպանութիւնները միջոցով խեղդել պրոլետարատական  
հեղափոխութիւններն Արեւմտեւորում: Նկարագրել իրենք իրաւի և  
Լյուկսեմբուրգի սպանութիւններ:

Բանվորներն այժմ ել այնտեղ կռիւմ են խորհուրդների  
իշխանութիւն սահմանելու համար, ա, դ պայքարն այնտեղ հը  
ղեկավարում են կոմունիստները:

4. Անցումն սոցիալիզմի կառուցման.—Հաղթելով սպիտակ  
զորքերին, Սորհրդային իշխանութիւնն սկսում է վերականգնել  
տնտեսութիւնը և կառուցել սոցիալիստական հասարակութիւն:  
Այժմ սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում ապահովված է: Սո-  
ցիալիստական շինարարութիւնը կատարվում է չափազանց լար-  
ված պայմաններում, վորովհետեւ յերկրն առաջ շատ հետամնաց  
եր, վորովհետեւ հաբկավոր է միաժամանակ պայքարել դասակար-  
գային թշաւանների մնացորդների կուլակներին և քահանաներին  
դեմ, վորոնց ողնում են արտասահմանյան կապիտալիստները՝  
մեր դեմ պատրազմ պատրաստելով, և վորոնք փորձում են վա-  
սել մեր սոցշինարարութիւն: Բոլշեկյան կուսակցութիւնը ղեկա-  
վարութիւնը Սորհ դային իշխանութիւն հաջողութիւնների և  
հաղթանակների հիմնական նախապայմանն է:

5. Հայաստանի խորհրդայնացումը: Հայաստանի բանվորներին և  
գյուղացիներին սոսկալի դրութիւնը դաշնակցութիւն կառավա-  
րութիւնն որոք:

Դաշնակցական կառավարութիւնը հայկական խոշոր բուր-  
ժուազիայի կառավարութիւնն էր: Հայաստանի բանվորներին և  
աշխատավոր գյուղացիներին սաստիկ ճնշումներն ու շահագործումը  
հայկական կապիտալիստների ու կալվածատերերին և նրանց կա-  
ռավարութիւնը կողմից: Հայաստանի սղգային փոքրամասնու-  
թիւնների հալածանքներն ու կոտորածը դաշնակցականների կող-  
մից (Զանգիարատարի, Աղբաբայի, Վեդիբաասարի կոտորածները և  
այլն):

Պատերազմները Վրաստանի, Ադրբեջանի և թուրքիայի  
հետ: Հայաստանի ժողտնտեսութիւն ծայր աստիճանի քայքայվե-  
լը և աշխատավորութիւն անտանելի վիճակը դաշնակցական կա-  
ռավարութիւն քաղաքականութիւն հետաւնքով: Բանվորների և  
գյուղացիների պայքարը դաշնակցական տիրապետութիւն դեմ  
Հայաստանի Կոմկուսի ղեկավարութիւնը: Մայիսյան ապստամ-  
բութիւնը և նրա դասերը վերջնական հաղթանակի համար:

Հայաստանի բանվորների և գյուղացիների ապստամբու-  
թիւնը Կոմկուսի ղեկավարութիւնը, դաշնակցական կառավարու-  
թիւնն ապալումը և Սորհրդային իշխանութիւն հաստատումը:  
(Հայաստանի խորհրդայնացումը 1920 թ. նոյեմբերի 29-ին): Աղ-  
գամիջյան կռիւների և պատերազմների դադարեցումը:

Փետրվարյան տվանտյուրան (քաղաքացիական կռիւները  
Հայաստանում), դաշնակցների վերջնականապէս ջախջախվելը և  
Սորհրդային իշխանութիւնն ամրապնդումը: Սաղաղ աշխատանք-  
ների պայմանների ստեղծումը, քայքայված տնտեսութիւն վերա-  
կանգնումը և սոցշինարարութիւնն աշխատանքներին անցնելը:  
Սորհրդային հանրապետութիւնների ոժանդակութիւնը Սորհրդ-  
դային Հայաստանին:

#### IV. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (5 Ժամ)

1. Կուսակցութիւն խնդիրները յեվ կազմը.—Կոմունիստական  
կուսակցութիւնը բանվոր դասակարգի կազմակերպութիւնն է,  
նրա ամենատառաջավոր, գիտակից, աշխատավորութիւնն ազատա-  
գրման գործին նվիրված մասը:

Կոմկուսակցութիւնն մեջ ընդունվում են նաև առաջավոր գիտա-  
կից գյուղացի—կոլխոզնիկներ, վորոնք իրենց ամբողջ ուժերը  
տալիս են կապիտալիստների, կալվածատերերին և կուլակների դեմ  
պայքարելու համար: Կուսակցութիւնն աշխատավորութիւնն հե-  
ղափոխական պայքարի կոլեկտիվ ղեկավարն է և սոցիալիստա-  
կան շինարարութիւն կազմակերպողը: Կոմունիստական կուսակ-  
ցութիւնները գոյութիւն ունեն բոլոր յերկրներում: Նրանք բո-  
լորը միացած են Կոմինտերնում: Համկոմկուսը (բ) Կոմինտերնի  
ամենաուժեղ և ղեկավար կուսակցութիւնն է:

2. Կուսակցութիւնն առաջնորդները.—Համկոմկուսի (բ) և Կո-  
մինտերնի կազմակերպիչն ու առաջնորդը Վ. Ի. Լենինն էր:  
Լենինի հետ և նրա ղեկավարութիւնը և կազմակերպվել հին բու-  
շեկներին ջոկաւոր, վորոնք իրենց ամբողջ կյանքն ու յեռանդը  
նվիրել են կուսակցութիւնն և բանվոր դասակարգին:

Ստալին, Զերժինկսի, Ֆրունզե, Մուրոմով, Վորոշիլով, Կա-  
լինին և մյուսները: Հերոսական պայքարի որինակներ նրանց  
կյանքից: 1924 թ. հունվարի 21-ին Վ. Ի. Լենինը մեռավ: Ամ-  
բողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիները կորցրին իրենց  
կալիսգույն առաջնորդին: Մեր յերկրի աշխատավորները Լենինի  
մահվան որը հարգում են նրա հիշատակը: Լենինի մահից հետո



կուսակցության ղեկավարը հանդիսանում է ՍՏԱԽՆԸ, վերը Լե-  
նինի հետ միասին ղեկ չօգտեմբերյան հեղափոխության շա-  
տաշ պայքարում եր բանվորների և գյուղացիների հաղթանակի  
և կուսակցության ստեղծման համար:

3. Ինչպես ե կուսակցությունը ղեկավարում.— Կուսակցություն-  
ը միշտ և ամեն տեղ մասսաների հետ է: Նա սերտորեն կապ-  
ված է մասսաների հետ և բանվորների ու գյուղացիների կապ-  
մակերպության խորհուրդների, արհմիությունների, կոոպե-  
րացիայի, կոմերիտմիության միջոցով ղեկավարում է մասսանե-  
րի պայքարը և սոցիալիզմի շինարարությունը: Յուրաքանչյուր  
գործարանում, յուրաքանչյուր կոլխոզում կան կուսերջիջներ, վո-  
րոնք ղեկավարում են աշխատանքը տեղերում:

#### V. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ- ՊՈՒԹՅՈՒՆԸ (8 ժամ)

1. Կոմերիտմիությունն կուսակցությանն ոգնականն ու փոխարինողն  
է:— Ինչպես ծագեց կոմերիտմիությունը: Լենինի պատգամները  
յերիտասարդության: Կոմերիտմիությունը ղեկավարվում է կու-  
սակցության կողմից: Կոմսոմոլի կազմը: Կոմերիտմիությունը  
մասնակցում է յերկրի ամբողջ տնտեսական, քաղաքական և կուլ-  
տուրական կյանքին:

Կոմսոմոլն ակտիվորեն պայքարում է ուսում, գիտություն  
ձեռք բերելու համար: Կոմերիտմիությունը սոցմրցման և հար-  
վածայնության առաջամարտիկն է: Կոմերիտմիությունը պար-  
տուհի է, ելեկարդֆիկացիայի, ծովային և ողային նավատորմի  
շեֆն է: Կոմերիտմիությունն ակտիվորեն պայքարում է կրոնի  
դեմ: Կոմերիտմիությունն անդուլ պայքարում է դասակարգային  
թշնամիների դեմ: Իր անդամներին նա ուղարկել է քաղաքացիա-  
կան պատերազմների ֆրոնտ, իր լավագույն անդամներին հիմա  
ուղարկում է նավատորմ, սոցշինարարության դժվարին բնագա-  
վառները, գյուղի կոլեկտիվացման ոժտնդակելու: Բոլոր դասա-  
կարգային թշնամիները կոմերիտմիությանն առում են: Մյուս  
յերկրներում կոմերիտմիությունը կոմկուսակցության ղեկավա-  
րությանը պայքարում է կապիտալիստների դեմ: Կոմերիտմիու-  
թյան բոլոր կազմակերպությունները միանում են ՅԵՐԻՏԱՍԱՐ-  
ԻԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼԻ ՄԵՋ. ՄՅՈՒԴ (Յե-  
րիտասարդության միջազգային ուր) և նրա նշանակությունը:

2. Պիոներներ.— Կոմերիտմիությանն ոգնականը և փոխարի-  
նողն են: Կոմերիտմիությունը ղեկավարում է պիոներներին: Պի-  
ոներների որենքներն ու սովորությունները: Նրանց կազմակեր-  
պությունը: Պիոներների մասնակցությունը սոցշինարարության  
և յերկրի պաշտպանության գործում: Պիոներներն ակտիվորեն  
պայքարում են դպրոցի բարելավման, ուսման և գիտելիքների  
համար: Պիոներներն ոգնում են կուսակցության՝ բարելավելու յե-  
րկրաների կյանքը: Պիոներների աշխատանքը գործարանում,  
կոլխոզում, դպրոցում, լիկկայանում, ՄՈՊՐ-ի գծով և այլն: Պիո-  
ներները բանվորների և գյուղացիների յերեխաների առաջնորդ-  
ներն են: Պիոներների աշխատանքը կապիտալիստական յերկրնե-  
րում (բերել որինակներ):

#### VI. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ (12 ժամ)

1. Խորհուրդներ բանվորների յիվ գյուղացիների իսխամության  
որգաններն են:— Դյուդի, քաղաքի, շրջանի, մարզի և ա՛րդջ յերկ-  
րի կառավարման համար բանվորները և գյուղացիները (18 տա-  
րեկանից) յրենց ժողովներում և համագումարներում ընտրում են  
խորհուրդներ: Խորհուրդների անդամները ընտրվում են լավա-  
գույն բանվորներից, միջակ մենատնտեսներից և կարմիր բանա-  
կայիններից: Շահագործողները (առևտրականներ, կուլակներ),  
նախկին վոստիկանական պաշտոնյաները և քահանաները խոր-  
հուրդներում չեն ընտրվում և ընտրելու իրավունք չունեն:

2. Խորհուրդների անդամներ.— Կուսակցության ղեկավարու-  
թյամբ խորհուրդները կառավարում են յերկրի ամբողջ կյանքը,  
նրա սոցշինարարությունը, յերկրի ներսում պայքարը դասակար-  
գային թշնամու դեմ, յերկրի պաշտպանությունն արտասահմանյան  
կապիտալիստների հարձակումից: Խորհուրդները հոգում են գոր-  
կապիտալիստների հարձակումից: Խորհուրդները, կոլտնտեսությունների,  
ծառանների, խորհրտնտեսությունների, կարարտանյութերի, գործարաննե-  
րի հումույթի և վառելանյութի մասին, քաղաքային տնտեսու-  
թյան, բանվորներին և գյուղացիներին միերքներով և ապրանք-  
ներով ապահովելու մասին, հազորակցության ճանապարհների,  
դպրոցների, աղումբների, խրճիթ-ընթերցարանների, մա՛կապար-  
տեղների, ամբողջ բնակչության ուսման, հաշմանդամներին և  
վորքերին ոգնելու մասին: Խորհուրդներն յրենց աշխատանքնե-  
րում ներդրավում են աշխատավորության լայն մասսաներին:  
Այդ նպատակով խորհուրդները կազմակերպում են աշխատանքի



աւարքեր ընազավառներէ համար տնտեսական, քաղաքական, կուլ-  
տուրական սեկցիաներ:

3. Ինչպես ե կառուցված խորհուրդներէ իշխանութիւնը յետ-  
ում. — Քաղաքները և գյուղերը և նրանց խորհուրդներն իրենց  
աշխատանքներով մեկը մյուսի հետ կապված են. այդ պատճառով  
նրանք միանում և կազմում են շրջաններ: Շրջանների բոլոր  
խորհուրդների ներկայացուցիչները հավաքվում են խորհուրդների  
շրջանային համագումարի և վորոշում են այն գլխավոր հարցերը,  
վորոնք վերաբերվում են ամբողջ շրջանին. իսկ մշտական աշխա-  
տանքի համար ընտրում են շրջանային գործադիր կոմիտե (շըք-  
գործկոմ): Շրջանները միանում են և կազմում են մարզեր, իսկ  
յերկրներ. մարզային կամ յերկրային համագումարներում ընտր-  
վում են մարզային կամ յերկրային գործադիր կոմիտեներ: Մեր  
յերկրում բնակվող ազգութիւնները ունեն իրենց հանրապետու-  
թիւնները և մարզերը: Բերել որինակներ:

Հանրապետութիւններում խորհուրդների հանրապետական  
համագումարը ընտրում է կենտրոնական գործադիր կոմիտե:

Բոլոր հանրապետութիւնները միանում և կազմում են Խոր-  
հրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւն:  
Խորհուրդների համամիութենական համագումարը ընտրում է  
Միութեան Կենտգործկոմ:

4. Ժողկոմխորհ յեվ Ժողկոմսեմե: Սոցիալարարութեան բո-  
լոր բնազավառներն ընդգրկելու համար Կենտգործկոմն ունի զա-  
նազան Ժողովրդական կոմիտարիատներ. Ժողատնտեսի, Հողոր-  
դակցութեան Ժողկոմատ, ՀողԺողկոմատ, ՄասԺողկոմատ, Կոմու-  
նալ տնտեսութեան Ժողկոմատ, ԱռԺողկոմատ, ԼուսԺողկոմատ,  
Կապի Ժողկոմատ, Ռազմածովային Ժողկոմատ, Արտաքին առևտրի  
Ժողկոմատ, Արտաքին գործերի Ժողկոմատ, Բացատրելու քաղաք-  
ային Ժողկոմատի նշանակութիւնը, որինակներ բերելով: Յուրա-  
քանչյուր Ժողկոմատ գլխավորում է կենտգործկոմի կողմից  
ընտրված Ժողովրդական կոմիտարը: Ժողովրդական կոմիտարների  
խորհրդակցութիւնը — Ժողկոմխորհը: Կենտգործկոմի հանձնարա-  
րութեամբ և նրա կոմտրոլի տակ Ժողկոմխորհը տանում է յերկրի  
դեկլարութեան ամբողջ ընթացիկ աշխատանքը: Խորհրդային  
պետութեանը գլուղատնտեսութեան սոցիալիստական վերակա-  
ռուցման գործում ոգնելու համար գոյութիւն ունի կոլտոզային  
կոոպերացիան, Կոլտոզկենտրոնի գլխավորութեամբ, իսկ խորհրդ-

ային առևտրի կազմակերպման գործում՝ սպաւոդական կոոպե-  
րացիան ԽՍՀՄ-ի Յենտրոստոյուզի գլխավորութեամբ:

5. ԽՍՀՄ-ն բոլոր ազգութիւնների աշխատավորների յեղբայրա-  
կան միութիւնն է. — ԽՍՀՄ-ում բոլոր ազգութիւնների աշխատա-  
վորներն առաջին անգամ հնարավորութիւն ստացան կառուցելու  
իրենց կյանքն ու կուլտուրան: Բերել սոցիալիստական շինարա-  
րութեան կոնկրետ որինակներ ազգային հանրապետութիւննե-  
րում, ազգային կուլտուրայի դարգացման որինակներ — մայրենի  
լեզու, ազգային արվեստ: Ուրիշ յերկրներում հեղափոխական  
բանվորները և գյուղացիները պայքարում են խորհրդային իշխա-  
նութիւն սահմանելու համար:

Այժմ բացի ԽՍՀՄ-ից խորհուրդներ կան Չինաստանում,  
վորոնք չինական կոմունիստների դեկլարութեամբ հերոսական  
պայքար են տանում կապիտալիստների և կալվածատերերի դեմ:

## VII. ԱՐՀԹԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ (7 Ժամ)

Գործարանների բանվորները միանում և կազմում են ար-  
հեստակցական միութիւններ: Յուրաքանչյուր գործարանում,  
խորհտնտեսութիւնում կա գործարկում: Մինչև Հոկ. հեղափոխու-  
թիւնն արհմիութիւնները հալածվում էին ցարական կառավա-  
րութեան կողմից: Այն ժամանակ արհմիութիւնների գլխավոր  
նպատակն էր պայքարել կապիտալիստների դեմ՝ բանվորների  
դրութեան բարելավման համար, կապիտալիստների իշխանութեա-  
նը տապալելու համար:

Բոլոր յերկրների բանվորներն ունեն արհմիութիւններ.  
նրանք պայքարում են կապիտալիստների դեմ (կապիտալիստա-  
կան յերկրների բանվորների դրութիւնից որինակներ բերել՝  
գործադրկութեան և այլն):

Այժմ մեր յերկրում արհմիութիւնների գլխավոր անելիքն  
է սոցիալարարութիւնը և պայքարը թշնամիների դեմ, վորոնք  
խանգարում են բանվոր դասակարգին՝ սոցիալիզմ կառուցելու:  
Արհմիութիւնները բանվորութեան մեջ կազմակերպում են սոց-  
մրցում և հարվածայնութիւն՝ գործարանների պլանների լավա-  
դուլն կատարման համար, պայքարում են վնասարարների, պրո-  
գոյիլիկների և հարբեցողների դեմ, դեկլարում են բանվորա-  
կան գլուղաբարարութիւնը, հոգում են աշխատանքի պաշտպանու-  
թեան և աշխատանքի պայմանների բարելավման մասին: Կազ-  
մակերպում են իր անդամի և նրանց ընտանիքների



անդամների ուսման գործը և կուլտ աշխատանքը, — կազմակերպում են ոժանդակություն գյուղին, կազմակերպում են յերկրի պաշտպանություն գործի ոժանդակությունը: Արհմիությունները հոգում են կոոպերացիայի աշխատանքների բարելավման մասին: Գործարկողները կազմակերպում են ակումբներ, դպրոցներ, շեֆական և կամավոր ընկերություններ, ՊԱԶ. Ավիտֆիմ, ՄՈՊՐ: Յերեխաների Բարեկամներ ընկերություն, «Գորչի անդամագիտությունը» գյուտարարների բլուր, պատի լրագրեր և այլն:

Խորհրդային արհմիություններն մյուս յերկրների արհմիությունների հետ միասին միանում են Պրոֆինաերնում:

Արհմիությունները ղեկավարվում են կուսակցության կողմից:

### VIII. ԿՈՒՍԱԿՑՈՒՆՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԹՅՈՒՆԸ (8 ժամ)

Բանվոր դասակարգը և գյուղացիությունը բուլճարիկյան կուսակցության ղեկավարությունը սոցիալիստական ասպարիզում ձեռք բերին հսկայական հաջողություններ: Հեղափոխության անցած տարիների ընթացքում մեր յերկիրն արմատապես փոխվեց: Յարկրի ինդուստրիալումը ԽՍՀՄ-ն դարձրեց արդյունաբերության յերկիր: Հարյուրավոր գործարաններ, հազարավոր վերստ հանապարհներ ապահովեցին գյուղի անցումը խոշոր կոլեկտիվ տնտեսության, վորտեղ մեքենաները, կոմբայները և տրակտորները ափսի և ափսի դյուրացնում են ծանր աշխատանքները: 1832 թ. մեր յերկրի համատարած կոլեկտիվացումը հիմնականում ավարտվում է: Համատարած կոլեկտիվացման հիմքի վրա վերացվում է կուլակությունը վերադադարում:

Սոցիալիստականությունը տարվում է պլանով: Առաջին հնգամյա պլանը կատարվում է 4 տարում և ափարտվում է 1932 թվին: Անդրագետ, հետամնաց յերկրից մեր յերկիրը դառնում է բարձր կուլտուրական յերկիր: Բանվորների և գյուղացիների համառ պայքարով վերացվում է անդամագիտությունը, անց և կացվում պարտա:

Կարմիր բանակը պահպանում է մեր սահմանները կապիտալիստների հարձակումից: Ամբողջ աշխարհի բանվորները հույսով են նայում մեր յերկրին, վորը նրանց ցույց է տալիս կապիտալիստներին հաղթելու ուղին: ԽՍՀՄ-ն ամբողջ աշխարհի բանվորների և գյուղացիների հաղթածային բրիգադն է:

### Գ. ԽՈՒՄԲ

### I ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ (18 ժ.)

ԽՍՀՄ-ում ամբողջ տնտեսությունը տարվում է պլանային ձևով: Դահնարավոր և այն պատճառով, վորովհետև ֆարրիկաներն ու գործարաններն պատկանում են վոչ թե անհատ կապիտալիստներին այլ խորհրդային պետությունը:

Կապիտալիստական յերկրներում տնտեսությունը հնարավոր է պլանային ձևով տանել, վորովհետև հողը, ֆարրիկաներն ու գործարանները պատկանում են առանձին կապիտալիստներին ու հալվածատերերի, վորոնցից յուրաքանչյուրը մտածում է միայն իր շահույթի մեծացման մասին:

Մենք կազմում ենք ժողտնտեսության զարգացման պլանը վոչ միայն ղեկավարի, ամսվա, տարվա, այլ և յերկար ժամանակի համար: Մենք կազմել ենք հնգամյա պլան, վորը կատարում ենք 4 տարում: Մենք արդեն ձեռնարկել ենք յերկրորդ 5-ամյակի պլանը կազմելուն:

2. Ցարի ժամանակ մեր յերկիրը հետամնաց էր. ֆարրիկաներ ու գործարաններ քիչ կային, մանավանդ շատ քիչ եյին աշխատիկները, վորոնք արտադրելին մեքենաներ, Բոլոր բարդ մեքենաները ներմուծվում եյին արտասահմանից:

Համաշխարային պատերազմի (1914—17 թ.թ.) և քաղաքացիական կոիմների (18—21 թ.թ.) ընթացքում ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսությունն էլ ափսի քայքայվեց: Դաղաքացիական կոիմներից հետո, Խ. իշխանությունն անցավ ժողտնտեսության վերականգմանը. կարճ ժամանակամիջոցում (21—27 թ.թ.) վերականգնելով այն՝ նա անցավ նրա սոցիալիստական վերակառուցման աշխատանքներին:

3. Մենք ԽՍՀՄ-ն դարձնում ենք ինդուստրիալ յերկիր: ԽՍՀՄ-ում կառուցվել յեղ վեռակարուցում են նոր հսկա գործարաններ, վորտեղ պատրաստվում են ամենաբարդ մեքենաները, վորոնց ոգնությունը արտադրվելու յեն մեքենաներ և արտադրության դահնազան գործիքներ, ծանր արդյունաբերություն:

Մենք վերջ ենք տալիս ազգային շրջանների հետամնացությունը, կառուցում ենք երկտրոկայաններ, ֆարրիկաներ, գործարաններ, անց ենք կացնում նոր յերկաթուղիներ յեղ ալլն: (Անդրկովկասում Զագես, Ջորագես, Դաղքեսանի, մետալուրգիական գործարան, Ալլաթ. Զուլֆա յերկաթուղին, ցեմենտի գործարան,



քիմ. գործարան, Գանադեզես, և այլն)։ Ուժգին թափով դարգացնելով խ. Միության արդունաբերությունը, մենք ազատվում ենք կապիտալիստական յերկրներից տնտեսական կախվածությունից։

4. Մենք կոլեկտիվացնում ենք գյուղատնտեսությունը սոցիալիստան հիմունքներով։

Բանվոր դասակարգը կոմ. կուսակցութան ղեկավարությամբ զարգացնելով արդունաբերությունը, հենց դրանով էլ ոգնում է նաև աշխատավոր գյուղացիությունը միացնելու ցածր և ցրիվ մանր անհատական տնտեսությունները կոլեկտիվացնելու։ Միայն կոլեկտիվ աշխատանքով, համայնացված հողի արտադրական միջոցների շնորհիվ կարելի է բարձրացնել գյուղատնտեսական աշխատանքի արտադրականությունը, ստանալ բարձր բերք, արդյունավետ փոխարինել բարդ մեխանիզմներով (տրակտոր, կոմբայն և այլն), վորոնք հեշտացնում են աշխատանքը կոլեկտիվացնելու։ (Շրջապատի իրականությունից վերցրած կոնկրետ որինալիներով ցուց տալ կոլեկտիվ տնտեսության առավելությունները անհատական տնտեսության հանդեպ)։ Կոլեկտիվ տնտեսությունը բարելավում է կոլեկտիվի տնտեսական դրությունը և բարձրացնում է նրանց կոլտուրական մակարդակը։ ԽՍՀՄ-ի գյուղացիական տնտեսությունների մեծամասնությունը (60 տոկոսից ավելին) միացվել են կոլեկտիվներում (բերել թվական տվյալներ խորհմիություն և Հայաստանի կոլտոգ շարժման մասին)։ Խորհրդային միության մի շարք հացահատիկային և տեխնիկական մշակույթների շրջաններ (Կովկաս, Միջին Ասիա, Ստորին Վոլգա և այլն) յենթարկված են համատարած կոլեկտիվացման. այդտեղ կուլակը վորպես դասակարգ վերացված է, 1932 թվ. ԽՍՀՄ-ում հիմնականում պետք է ավարտվի համատարած կոլեկտիվացումը։

Կուլակները կատաղել կերպով դիմադրում են գյուղատնտեսության կոլեկտիվացմանը, նրանք վոչինչացնում են կոլտոգի գույքը, մեքենաները, տերրորի լին լենթարկում լավագույն կոլեկտիվներին և այլն։ Համոզում են մենատնտեսներին չմտնել կոլտոգ և ամեն կերպ զնառում են կոլեկտիվներին։ Բանվոր դասակարգը կոմ. կուսի ղեկավարությամբ հենվելով կոլեկտիվ գյուղացիության վրա, անողոք պայքար են սղում կուլակության դեմ՝ նրան վորպես դասակարգ վերջնականապես վոչնչացնելու համար։ Համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակներից վերցվում են ինվենտարը, հողը և քաշող անասունները, վորոնք

անցնում են կոլտոգների տրամադրության տակ, իսկ կուլակները վոնդվում են համատարած շրջաններից։

5. Սոց. արդունաբերության և գյուղատնտեսության զարգացման բարձր տեմպերին մենք հասնել շնորհիվ նրա, վոր բանվոր դասակարգն աշխատում է վոչ թե կապիտալիստի, այլ Խորհրդային պետության համար և կոմկուսի ղեկավարությամբ պայքարում է դուռակարգային թշնամու դեմ։ Մեր գործարանները սոցիալիստական են, նրանցում չկա շահագործող մ. Բանվորները շահագործված են աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ։ Բանվորները կազմակերպում են գործարաններում հարվածայնություն և սոցմրցում, վորպեսզի կատարեն 5-ամյակը 3 և 4 տարում։ Բանվորները ակտիվ կերպով մասնակցում են փոխառություններին, վորոնց նպատակն է ապահովել սոցիալիստական տնտեսության զարգացման տեմպերը։ Շնորհիվ բանվոր դասակարգի հերոսական ջանքերի, ԽՍՀՄ-ի սոց. տնտեսությունը զարգանում է կապիտալիստական յերկրների համար չանսված տեմպերով։

